

## Լեոնային Ղարաբաղի դեմ կռուած Ատրպէյճանցի նախկին փոխնախարարը այցելեց Ստեփանակերտ

Լեոնային Ղարաբաղ այցելեց Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալ Ալաքըրամ Գուլամաթովը: Ան 90-ականներուն անձամբ ակտիւ մասնակցութիւն ունեցած է Ղարաբաղի դէմ պատերազմական գործողութիւններուն:

«Ինչպէս տղամարդավարի կռուած եմ, այնպէս ալ եկած եմ տղամարդավարի հաշտութեան ձեռք երկարելու», - յայտարարեց Գուլամաթով Արցախի Պետական Համալսարանէն ներս կազմակերպուած հանդիպման ժամանակ: - «Ես միշտ ըսած եմ՝ եթէ տղամարդավարի կը կռուիս, ուրեմն պէտք է նաեւ տղամարդավարի ընկերութիւն ընես»:

«Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ ինչ կ'զգայ հիմա, երբ եկած է հանդիպելու այն ժողովուրդի հետ, որոնք դէմ պատերազմած է, Գուլամաթով պատասխանած է, որ ինք այստեղ է, որպէսզի այդ ամէնը այլեւս չկրկնուի. - «Ես գիտեմ, թէ ինչ է պատերազմը եւ այլեւս չեմ ուզեր, որ այն երբեք կրկնուի: Այո, ես պատերազմած եմ Լեոնային Ղարաբաղի դէմ եւ այդ չեմ թաքցներ. Բայց այսօր ես կ'ըսեմ՝ ի՞նչ իրաւունքով երիտասարդ տղաները պատերազմի դաշտ կ'ուղարկէի... այս եւ նման շատ ու շատ հարցեր այսօր զիս հանգիստ չեն տար»:

Ալաքըրամ Գուլամաթով այժմ կը բնակի Հոլանտաի մէջ: Տարիներ առաջ Ատրպէյճանի իշխանութիւնները բազմաթիւ ձեռքարկելու թիւններէ յետոյ զինք արտաքսած էին՝ զրկելով Ատրպէյճանի քաղաքացիութենէն:

Ան իր խօսքին մէջ բազմիցս քննադատեց Ատրպէյճանի իշխանութիւններուն՝ երկրէն ներս վա-



Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալ Ալաքրամ Գուլամաթովը

րուող քաղաքականութեան եւ մասնաւորապէս, թախիշներու նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի համար: Անոր կարծիքով, այդ ամենուն միջազգային հանրութիւնը ուշադիր կը հետեւի, սակայն «անհատ ներկայացուցիչներ կը դառնան կաշառակերութեան մասնակից՝ այդպիսով աչք փակելով տեղի ունեցող իրադարձութիւններուն վրայ»:

Ինչ կը վերաբերի Լեոնային Ղարաբաղին, ապա նախկին փինաեաւրը չպահեց իր հիացմունքը: Ան ըսաւ, որ յուզուած է ջերմ ընդունելութեան առթիւ եւ յուսով է, որ այս իր վերջին այցելութիւնը չըլլար:

«Ինձի համար հաճելի է գտնուիլ Արցախի մէջ: Մենք պէտք է ընենք ամէն ինչ, որպէսզի մեր տարածաշրջանէն ներս խաղաղութիւն տիրէ, որպէսզի մեր թանկագին երեխաները ապրին, ուսում ստանան խաղաղ պայմաններու մէջ», - ըսաւ Գուլամաթովը:

## Եպիսկոպոսական ժողովը որդեգրած է Հայոց ցեղասպանութեան նահատակներու հաւաքական սրբադասման սկզբունքը

Սեպտեմբերի 24-27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ գումարուած Եպիսկոպոսաց ժողովի դիւանը հաղորդագրութեամբ մը եկաւ ամփոփելու ժողովի աշխատանքները: «Սեպտեմբերի 24-ի նիստերին Եպիսկոպոսաց դասը քննարկեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցում սրբադասման աւանդութեան վերականգնման հարցը եւ այդ շրջագծում Հայոց ցեղասպանութեան զոհերի սրբադասման խնդիրը», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Չեկոյցներու քննարկման արդիւնքով Հայոց ցեղասպանութեան զոհերու սրբադասման գործընթացի առնչութեամբ Եպիսկոպոսաց ժողովը որոշել է՝ որդեգրել Հայոց ցեղասպանութեան նահատակներու

հաւաքական սրբադասման սկզբունքը, յանձնարարել Սրբադասման յանձնախումբին՝ շարունակել նահատակներու անհատական եւ խմբային սրբադասման ուսումնասիրութիւնը՝ Եպիսկոպոսաց յառաջիկայ ժողովներուն ներկայացնելու համար, յանձնարարել Սրբադասման յանձնախումբին մշակել սրբադասման կանոնակարգը եւ արարողակարգը՝ Եպիսկոպոսաց յառաջիկայ ժողովին ներկայացնելու համար:

Սեպտեմբեր 25-26-ի նիստերուն Եպիսկոպոսաց ժողովի մասնակիցները քննած են Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու յառաջին երկու խորհուրդներու՝

## Սերժ Սարգսեան յայտարարեց՝ Հայաստան պատրաստ է ստորագրելու ընկերակցութեան համաձայնագիրը

Հոկտեմբեր 2-ին, Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովին (ԵՆԽՎ) առջեւ ելոյթ ունենալով Սերժ Սարգսեան յայտարարեց, որ Հայաստան պիտի մասնակցի Վիլնիւսի մէջ տեղի ունենալիք գագաթի ժողովին, եւ պատրաստ է ամբողջովին ստորագրել՝ Եւրոպայի հետ Առոցացման (Ընկերակցութեան) համաձայնագիրը:

Ռուսաստանի գլխաւորած Մաքսային Միութեան միանալու կապակցութեամբ Սեպտեմբեր 3-ին Սերժ Սարգսեանի կատարած յայտարարութենէն ետք, Եւրոպայի հետ Ընկերակցութեան Համաձայնագիրը դրուած էր կասկածի տակ:

«Հիմա էլ մենք պատրաստ ենք Եւրամիութեան հետ Առոցացման համաձայնագիր ստորագրել, բայց ցաւօք, մեր յայտարարութիւնից յետոյ՝ Մաքսային Միութեանը անդամակցելու մասին, Եւրոպական յանձնաժողովի մեր գործընկերներն ասացին, որ ուղղակի հակասութիւն կայ Մաքսային Միութեան եւ Ազատ Առեւտրի Պայմանագրի միջեւ, կանոնների տարբերութիւն կայ: Մենք առաջարկեցինք, որ այս պարագայում, ինչդրեմ, ստորագրենք Առոցացման Համաձայնագիրը, որը հիմնական քաղաքական բարեփոխումներ է ենթադրում, եւ մենք պատրաստ ենք, ոչ միայն պատրաստ ենք, այլ վճռական ենք մեր երկրում այդ բարեփոխումները իրականացնելու: Հիմա այս գործընթացն է գնում»:

Մենք լինելու ենք Վիլնիւսում եւ հիմա արդէն Եւրամիութեան մեր գործընկերների հետ բանակցում ենք, թէ ինչպիսի փաստաթուղթ պէտք է ստորագրենք», - ըսաւ Սերժ Սարգսեանը:

Հայաստանի նախագահը պատասխանելով համաժողովի պատգամաւորներու հարցերուն՝ անդրադարձաւ նաեւ Ռուսաստանի կողմէ Հայաստանի վրայ գործադրուած ճնշումներու մասին պնդումներուն:

«Ճնշումների մասին խօսելն աւելորդ է, ես ձեզ անկեղծօրէն ասում եմ, եւ չեմ կարող հրապարակաւ ոչ ճշմարտութիւնը ասել՝ որեւէ պաշտօնեայ Ռուսաստանի Դաշնութիւնից կամ Մաքսային Միութիւնից կէս բառ անգամ չի ասել Հայաստանի անդամակցութեան անհրաժեշտութեան մասին: Մենք ենք այդ ցանկութիւնը յայտնել, որովհետեւ ելել ենք շատ պարզ իրողութիւնից. մենք 20 տարուց աւելի է, որ գտնուում ենք ռազմական անվտանգութեան մի համակարգում, որի բաղկացուցիչ մասերն են կազմում այն պետութիւնները, որոնք այսօր ձեւաւորել են Մաքսային Միութիւն, եւ մենք չենք կարող մեկուսանալ աշխարհատեսակական այն տարածքից, որի հետ 20 տարուց աւելի է համագործակցում ենք: Ժամանակը չի ներում, ես կարող էի աւելի մանրամասն ասել, թէ ինչպիսի տնտեսական շահ կ'ունենայ Հայաստանը դրանից», - ըսաւ Հայաստանի նախագահը:

## Ազնաւուրը մտադիր է Թուրքիա այցելել

Ֆրանսական թերթերէն մէկուն տրուած հարցազրոյցի մը ընթացքին, հայազգի աշխարհահռչակ երգիչ Շար Ազնաւուր յայտնած է որ, կը փափաքի այցելել իր մօր ծննդավայրը:

Ազնաւուր անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններու ըսած է. - «Ես կողմ եմ թուրքիոյ հետ մերձեցման: Հայերը ինձի հետ այս հարցով համաձայն չեն: Բայց կան մտաւորականներ, որոնք կողմ են հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորմանը», - ըսած է ան:

Ազնաւուր ըսած է, որ կը ծրագրէ այցելել Թուրքիա: «Բայց ես չեմ ուզեր, որ խօսին ո'չ Հայկական հարցի, ո'չ Եւրամիութեան թուրքիոյ անդամակցութեան մասին: Կը փափաքիմ պարզապէս երթալ այն երկիրը, ուր ծնած է մայրս», - ըսած է ան:

Ազնաւուր յայտնած է, որ կը սիրէ թուրք ժողովուրդին եւ երբ ինչ-որ բան կ'ըսէ, այդ Ան-



Հայազգի աշխարհահռչակ երգիչ Շար Ազնաւուր

գարայի դէմ է եւ ոչ թուրք ժողովուրդի:

Պատասխանելով թուրքիա երթալու հետ կապուած վտանգի մասին հարցումին, Ազնաւուր պատասխանած, որ իր տարիքին վտանգը այլեւս մեծ բան չէ, իսկ ինք երբեք վախկոտ չէ եղած:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վոլոդիա Ալեքսեյեան «շինծու» է որակում իր դեմ մեղադրանքը

Խոշոր չափերի խարդախութեան համար կալանաւորուած պահեստագործի գնդապետ Վոլոդիա Ալեքսեյեանը յայտարարում է, որ «իր քայլերը կասեցնելու ուրիշ տարբերակ չգտնելով, վարչախումբը իրեն բանտարկել է շինծու մեղադրանքով»:



Գնդապետ Վոլոդիա Ալեքսեյեան

մնացել: Այն, ինչ այսօր կոչում են պետութիւն, իրականում մեր ժողովրդին կեղեքող ու մեր պետականութիւնը կործանող մի համակարգ է, որը նման է իր տակի ճիւղը կտրող մարդու: Եթէ նրա ձեռքը չբռնենք, բոլոր միասին կործանուելու ենք: Իսկ այդ ձեռքը կարող ենք բռնել միայն ազգային-ազատագրական պայքարը աւարտին հասցնելով եւ ազգային պետութիւն կառուցելով:

Երկու ամսուայ նախնական կալանքի ենթարկուած Ալեքսեյեանը Մալխին նստացոյց էր յայտարարել Ազատութեան հրապարակում՝ պահանջելով բարելաւել ազատամարտիկների սոցիալական պայմանները: Ալեքսեյեանին հետագայում միացան նաեւ այլ ազատամարտիկներ:

Համաձայն պաշտպանութեան նախարարութեան Սեպտեմբերի 20-ին տարածած հաղորդագրութեան՝ Ալեքսեյեանը խաբէութեան եւ վստահութիւնը չարաչափու եղանակով քաղաքացի Հ. Զաքարեանի թոռանը պարտադիր ժամկետային զինուորական ծառայութիւնից ազատելու հարցում աջակցութիւն ցոյց տալու պատրուակով, Հ. Զաքարեանից յափշտակել է 2000 ԱՄՆ դոլար գումար:

Սեպտեմբեր 30-ին տարածած յայտարարութեան մէջ Ալեքսեյեանը խստորեն քննադատում է իշխանութիւններին՝ նրանց մեղադրելով «յանուն իրենց անձնական եւ խմբակային շահի պետականութիւնը չչարգելու, չընդունելու» մէջ եւ կոչ անում իր մարտական ընկերներին եւ ժողովրդին՝ «ոչ մի դէպքում չնահանջել եւ միանալով ազգային-ազատագրական պայքարին՝ իրականութիւն դարձնել ազգային պետութեան կառուցման երազանքը»:

«Ինձ համար այլեւս փաստ է, որ մենք չունենք ազգային պետութիւն: 1988-ին սկսուած ազգային-ազատագրական պայքարը կիսատ է

Այս մասին վերջին շրջանում բազմիցս բարձրաձայնել եմ եւ արդէն պատրաստուում էի հանդէս գալ պայքարի սոցիալական դրօշը ազգային-պետական բնոյթի քաղաքականով փոխարինելու նախաձեռնութեամբ: Մտադիր էի իմ աջակցութիւնը յայտնել Նախախորհրդարանին, քանի որ նա է պարզել ազգային-ազատագրական պայքարը աւարտին հասցնելու եւ հայկական պետութիւն կառուցելու դրօշը: Իմ այս քայլերը կասեցնելու ուրիշ տարբերակ չգտնելով՝ վարչախումբը ինձ բանտարկեց շինծու մեղադրանքով: Սակայն նրա ջանքերն իրողը եմ, ես պայքարելու եմ մինչեւ յաղթանակ», - ասուած է Ալեքսեյեանի յայտարարութիւնում:

Խորհրդարանը Կոստանեանին հաստատեց Գլխաւոր դատախազի պաշտօնում

Փակ գաղտնի քուէարկութեամբ՝ 103 կողմ, 3 դէմ, Ազգային ժողովը հաստատեց Գէորգ Կոստանեանին Գլխաւոր դատախազի պաշտօնում:



Հայաստանի նոր գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեան

Մինչեւ քուէարկութիւնը նախագահի ներկայացրած թեկնածուին կողմ լինելու մասին յայտարարել էին միայն իշխանական կոալիցիան կազմող Հանրապետական եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւնների խորհրդարանական խմբակցութիւնները (միասին այս խմբակցութիւններն ունեն 75 մանդատ):

«Բարգաւաճ Հայաստան» եւ «Դաշնակցութիւն» խմբակցութիւններն իրենց պատգամաւորներին ազատ քուէարկութեան հնարաւորութիւն էին տուել:

Կոստանեանի թեկնածութեան քննարկման ընթացքում «Ժառանգութեան» եւ ՀԱԿ-ի պատգամաւորների հնչեցրած գնահատականներից կարելի էր ենթադրել, որ նրանք դէմ են քուէարկելու:

Քուէարկութեան արդիւնքների ամփոփումից յետոյ, ինչպէս Նիկոլ Փաշինեանը (ՀԱԿ) ձեւակերպեց՝ քաղաքական նոր հանելուկի յայտ եկաւ. Աժ երկու ընդդիմադիր խմբակցութիւններ յայտարարում են, որ դէմ են նախագահ Սերժ Սարգսեանի առաջադրած թեկնածուին, բայց փակ գաղտնի քուէարկութեան արդիւնքում Կոստանեանը ստանում է ընդամենը երեք դէմ:

Մինչեւ քուէարկութիւնը Արամ Մանուկեանը (ՀԱԿ), նկատի ունենալով պաշտօնավարման աւարտից յետոյ Գլխաւոր դատախազութեան դուռը համբուրած Աղուան Յովսէփեանին, ասաց, թէ «գուճապաշտ դատախազը ծանր ժառանգութիւն է թողել», բայց «արդէն իսկ կանխորոշուած» համարեց Կոստանեանի վարքագիծը՝ ասելով. - «Նա Սերժ Սարգսեանին ձեռնոց չի նետի»:

Ռուբէն Յակոբեանի («Ժառանգութիւն») ձեւակերպմամբ՝ դատախազութիւնն իշխանութիւնների ձեռքին միշտ եղել է «ռեպրեսիւ մուրճ»

«Շարունակելու եմ ծառայել համաժողովրդական շարժման իդեալներին եւ նպատակներին».- Նիկոլ Փաշինեան

Աժ «Հայ ազգային կոնգրէս» խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը Tert.am-ի հարցին, թէ ՀՀ գլխաւոր դատախազի պաշտօնում Գէորգ Կոստանեանին նշանակելու մասին ՀՀ նախագահի առաջարկի շուրջ Աժ-ում տեղի ունեցած փակ, գաղտնի քուէարկութիւնից յետոյ ժամանակը չէ՞ ՀԱԿ խմբակցութիւնից դուրս գալու, նկատեց, որ ինքն այդ հարցին բազմիցս է անդրադարձել:



Աժ պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

«Նոյն հարցը ունենում է նոյն պատասխանը, կարող էք գտնել իմ նախկին ելոյթներում ու յօդուածներում», - նշեց նա:

Յիշեցնենք, որ «Հայ ազգային կոնգրէս» խմբակցութեան 7 պատգամաւորներից Քուէարկութեանը մասնակցել էին 6-ը (բացի Լեւոն Զուրաբեանից), իսկ Գէորգ Կոստանեանի թեկնածութեանը դէմ քուէարկութեանը մասնակցած Աժ 108 պատգամաւորից քուէարկել էին 3-ը: Ինքը՝ Նիկոլ Փաշինեանը, նախապէս յայտարարել էր, որ դէմ է քուէարկելու եւ բջջային հեռախօսով լուսանկարել էր իր քուէարկութիւնը, քանի որ, ինչպէս ասելի ուշ ասել էր «Ֆէյսբուքում» արած գրառման մէջ, կանխատեսել էր դէպքերի նման զարգացումը: Եւս 2 քուէ անվաւեր է ճանաչուել:

Դիտարկմանը, թէ ամէն դէպքում միջադէպից յետոյ ակնյայտ է ՀԱԿ խմբակցութեան պատգամաւորների եւ նրա անհամատեղելիութիւնը, Փաշինեանն արձագանքեց.

«Ջետք»-ը խոստանում է ներկայացնել, թէ ինչպէս է ոչնչացւում լրատուական դաշտը

«Ջետք» պարբերականի գլխաւոր խմբագիր Էդիկ Բաղդասարեանը գրառում է կատարել Ֆէյսբուքեան էջում՝ անդրադառնալով մեդիա դաշտին. «Իւրաքանչիւր պաշտօնեայի սրբազան պարտքն է դարձել ունենալ նուազագոյնը մէկ լրատուական կայք: Հիմա ձեռի հետ պատգամաւոր աշխատող ԼՖԻԿը միանգամից բացել է երկուսը: Բաւականին ժամանակ է մտմտում եմ «Ջետք» թերթը փակելու մասին: Որովհետեւ մեդիա դաշտում, մենք կարծես թէ արդէն տեղ եւ անելիք չունենք:

ցաւ ոչնչացնել մեդիադաշտը:

Ինչ պրոյեկտներ է իրականացրել նախկինում եւ այժմ ինչ է անում Բաղդասարեանը 26-ը: Այս կամ այն լրատուամիջոցի որ լրագրողն է տանում, ասենք վարչապետի գիծը, որը ոստիկանապետի գիծը, որ օլիգարխը որ լրատուամիջոցին ինչքան է վճարում: Ովքեր են հեռուստաընկերութիւնները իրական սեփականատէրերը: Ինչպէս են պետական պաշտօնեաները, օլիգարխները կարգաւորում իրենց յարաբերութիւնները խմբագիրների, առանձին լրագրողների հետ: Ինչպէ՞ս մենաշնորհուեց գովազդի դաշտը, ով է այնտեղ հիմնական խաղացողը: Եւ հրաժեշտ հայաստանեան մեդիադաշտին»:

Հայաստանից մեկնածների շուրջ 60 տոկոսը դժգոհ են արտագաղթելու իրենց որոշումից

Հայաստանի մեկնածների շուրջ 60% դժգոհ են արտագաղթելու իրենց կայացրած որոշումից, սակայն այս կամ այն հոգեբանական պատճառներով լուրս են, չեն ներկայացնում ճշմարտութիւնը կամ անգիտակցաբար տրուում են ինքնախաբէութեան: Այս մասին նշուել է Հոկտեմբերի 2-ին, Երեւանում կայացած «Արտագաղթի հոգեբանութիւնը» թեմայով գիտաժողովի ժամանակ: Այս երեւոյթը հոգեբանութեան մէջ կոչում է հմոցիոնալ անյաջողութեան հերքման փուլ: Մէկ այլ հարցում ցոյց է տալիս, որ արտագաղթողների շուրջ 80% դժգոհում է ՀՀ-ում կրուուպցիայի մակարդակից, սակայն միգրացիոն հոսքերի հիմնական ուղղութիւնները տանում են շատ ավելի կոռուսպացի-

ուած երկրներ: Այս եւ մի շարք այլ վերլուծութիւնների արդիւնքում մասնակիցները փաստեցին, որ յաճախ արտագաղթի որոշման կայացման մէջ իրացիոնալութեան գործօնը մեծ դեր է խաղում:

Հայաստանի եւ Արցախի պետական սեկտորի ներկայացուցիչները գիտաժողովի մասնակիցներին ներկայացրին արտագաղթի խնդրի լուծման համար մշակուած պետական քաղաքականութիւնը եւ դրա իրականացման արդիւնքները: Ինչպէս նշում են գիտաժողովի կազմակերպիչները՝ իրենք ակնկալում են պայքարել արտագաղթի դէմ ոչ պետական սեկտորի գործիքակազմով, որը ներառում է բազմաթիւ միջոցներ, եւ որոնք այսօր մատնուած են անգործութեան:

**ԼՈՒՐԵՐ**

## ՄՄ-ին անդամակցելուց յետոյ հարցի տակ է դրուել Եւրոպայի հետ վիզային ռեժիմի դիւրացման հարցը

Հայաստանը այս տարուայ Յունուարից միակողմանի հանել է վիզային ռեժիմը Եւրամիութեան երկրների հետ, իսկ ԵՄ-ն պատրաստուում էր հեշտացնել Հայաստանի հետ վիզային ռեժիմը՝ վաւերացնելով Ռեադմիտիւսի եւ վիզաների ռեժիմի դիւրացման մասին պայմանագրերը: Հայ փորձագէտը մտահոգութիւն է յայտնում, որ ԵՄ-ն կարող է չվաւերացնել պայմանագրերը:

Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենտրոնի տնօրէն Ստեփան Գրիգորեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում կարծիք յայտնեց, որ Մաքսային միութեանը միանալու Հայաստանի քաղաքական որոշումը, կարող է բացասաբար ազդել Եւրոպայի հետ վիզաների դիւրացման գործընթացի վրայ:

«Օրակարգով նախատեսուած էր մինչեւ վիզնիսեան պայմանագրի ստորագրումը վաւերացնել այդ պայմանագիրը: Բայց հիմա քանի որ Հայաստանը այդպէս կտրուկ դուրս եկաւ այդ գործընթացից, դա կարող է ազդել վիզային ռեժիմի հեշտացման վրայ: Ֆորմալ տեսակէտից դրանք երկու տարբեր գործընթացներ էին, բայց Եւրոպայում մեծ դեր են խաղում քաղաքական տրամադրութիւնները: Ես չեմ բացառում, որ պառլա-

մենտներից մէկում մի քաղաքական ուժ կարող է սրել այդ խնդիրը», - ասաց Ստեփան Գրիգորեանը՝ մանրամասնելով, որ Եւրոպական երկրների պառլամենտները առանձին-առանձին պէտք է վաւերացնեն փաստաթղթերը:

Այսօր Հայաստանի բազմաթիւ քաղաքացիներ, դիմելով Շենգեն գոտու վիզայի, դժուարութեամբ են ստանում այն անգամ, երբ երբեք խախտած չեն լինում որեւէ երկրի մուտքի ու ելքի ժամկէտները:

Երբ ԵՄ-ն վաւերացնի վիզաների դիւրացման համաձայնագիրը, շատ սոցիալական խմբերի՝ այդ թւում ուսանողների, թոշակաւուների, գիտաժողովների մեկնող մարդկանց համար Շենգենի գոտու երկրների մուտքի արտօնագիրը անվճար կը դառնայ, վիզայի դիմող բոլոր քաղաքացիները կը ներկայացնեն աւելի քիչ թիւով փաստաթղթեր եւ արտօնագիրը կը ստանան կարճ ժամանակահատուածում:

Ստեփան Գրիգորեանի կանխատեսումը, որ ԵՄ-ն կարող է եւ չվաւերացնել դիւրացման համաձայնագիրը, չեն կիսում Արտաքին գործերի նախարարութիւնում, որ տեղից «Ազատութիւն» յայտնեցին, որ ակնկալուում է, որ համաձայնագիրը ուժի մէջ կը մտնի մինչեւ տարուայ վերջ:

## Արտասահմանցի պաշտօնեաները չեն վախենում Ադրբեյջանի «սեւ ցուցակից»

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում մեկնաբանելով վերջին շրջանում օտարերկրեայ պաշտօնեաների այցելութիւնների թիւի աճը՝ ԼԶ արտգործնախարար Կարէն Միրզոեանը նախ ասաց, որ դա արդիւնք է «որոշակի հետեւողական աշխատանքի»:

Միւս կողմից՝ նախարարը համոզուած է, որ միջազգային հանրութիւնը սկսել է հասկանալ, որ դարաբաղեան հիմնարարը գոտտ տարածաշրջանային խնդիր չէ, այլ լեւ առնչուում է համաշխարհային քաղաքականութեանը:

«Եւ ես համոզուած եմ, որ նման հետաքրքրութիւնը Արցախի բնակչութեան նկատմամբ դրա արտայայտութիւնն է: Այսինքն՝ այսօր բոլորն են հասկանում, որ Արցախում իրօք տեղի են ունենում պետականաշինութեան շատ լուրջ գործընթացներ, եւ Արցախը մի պետութիւն է, որը, չնայած իր չճանաչուած կարգավիճակին, կարող է հանդէս գալ միջազգային ասպարէզում՝ որպէս լուրջ եւ վստա-

հելի գործընկեր», - փաստարկեց Միրզոեանը: Նրա խօսքով՝ այսօր աւելի դիւրին է դարձել արտասահմանում ԼԶ ներկայացուցիչներին աշխատանքը. - «Այսօր դրսում ներկայացնելու շատ բան կայ, եւ այս աշխուժութիւնը նաեւ դրա արդիւնքն է»:

Լեռնային Ղարաբաղը, յիշեցնենք, ներկայացուցչութիւններ ունի աշխարհի 7 երկրներում:

Նշենք, որ միայն անցած Սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղ այցելել են պետական պաշտօնեաներ ու պատգամաւորներ Կանադայից, Դանիայից, Ֆրանսիայից եւ Միացեալ Նահանգներից: Նրանք պաշտօնական հանդիպումներ են ունեցել Արցախի ղեկավարութեան հետ եւ հիմնականում պատրաստականութիւն են յայտնել օգտակար լինել ԼԶ-ին իրենց երկրներում:

Լրագրողների հետ գրոյցներում նրանք յայտարարում էին, որ չեն վախենում Ադրբեյջանի «սեւ ցուցակում» յայտնուելուց:

## Եպիսկոպոսական ժողովը

Շարունակուած էջ 1-էն

Մկրտութեան եւ Դրոշմի առնչութեամբ Միսական յանձնախումբի կողմէ կատարուած աշխատանքները:

Սեպտեմբեր 27-ի նիստերը նուիրուած էին Հայ եկեղեցու այժմէական մարտահրաւերներուն: «Քննարկելով ներկայացուած մարտահրաւերները, որոնք վերաբերում էին Եկեղեցու ծիսական, քարոզչական կեանքին եւ կրթա-դաստիարակչական ու սոցիալական առա-

քելութեանը, հայապահպանութեան խնդիրներին՝ ժողովականները որոշեցին դրանք առաջնահերթութեան սկզբունքով համապարփակ քննութեան առարկայ դարձնել առաջիկա Եպիսկոպոսաց ժողովներին», - ըստուած է հաղորդագրութեան մէջ:

«Եպիսկոպոսաց ժողովը արդիւնքների ամփոփման հանգրուանին նաեւ մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կեանքում առկայ ընկերային, տնտեսական, ժողովրդագրական եւ տարբերոյթ ալ

## Ֆրանսիան կը շարունակի աջակցել Հայաստանի Եւրոպական օրակարգի առաջնորդանը



Սերժ Սարգսեան-Ֆրանսուա Օլանդի հանդիպումը «էլիզէյի» պալատէն ներս

Աշխատանքային այցով Ֆրանսիայի Հանրապետութիւնում գտնուող նախագահ Սերժ Սարգսեանն Հոկտեմբեր 1-ին հանդիպում է ունեցել Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ:

Հայաստանի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութեան փոխանցմամբ՝ Սերժ Սարգսեանը գոհունակութեամբ է նշել, որ երկու ժողովուրդների պատմական սերտ կապերից անուցող հայ-ֆրանսիական միջպետական յարաբերութիւնները վերջին քսան տարիների ընթացքում շարունակական զարգացում են ապրել՝ համելով պատմականօրէն ամենաբարձր մակարդակին:

Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահներն հանդիպմանը անդրադարձել են հայ-ֆրանսիական, ինչպէս նաեւ Հայաստան-ԵՄ համագործակցութեան հարցերին, տարածաշրջանային եւ գլոբալ հրատապ խնդիրներին:

Առեւտրատնտեսական յարաբերութիւնների առումով Սերժ Սարգսեանը գոհունակութեամբ է նշել Հայաստանում ֆրանսիական գործարար ստուար համայնքի առկայութիւնն այնպիսի առաջատար ընկերութիւններով, ինչպիսիք են «Կարֆուրը», «Պեռնո Ռիկարը», «Օրանժը», «Կրեդիտ Ագրիկոլը», «Ալկատելը», «Վեոլիան», որոնց շուտով կ'աւելանան նաեւ նորերը:

Նախագահը կարեւորել է ընթացիկ տարուանից մեկնարկած Զարգացման ֆրանսիական գործակալութեան աջակցութեան ծրագրերը: Նա ընդգծել է, որ յաջողութեամբ է զարգանում նաեւ ապակենտրոնացուած համագործակցութիւնը՝ գործընկերային սերտ կապեր են հաստատուել Հայաստանի եւ Ֆրանսիայի 30-ից աւելի տեղական իշխանութիւնների միջեւ: Այդ համատեքստում Ֆրանսիայի նախագահը յատկապէս կարեւորել է Հոկտեմբերի 15-17-ին վալանսում կայանալիք ապակենտրոնացուած համագործակցութեան 3-րդ համագումարը:

Հանդիպման ժամանակ նա-

խագահ Սերժ Սարգսեանը վերստին շնորհակալութիւն է յայտնել Ֆրանսուա Օլանդին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղութեամբ ֆրանսիական կողմի երկարամեայ հետեւողական ջանքերի համար: Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահները եւս մէկ անգամ ընդգծել են, որ այլընտրանք չեն տեսնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան շրջանակներում հիմնախնդրի խաղաղ կարգաւորմանը: Սերժ Սարգսեանը նշել է, որ Հայաստանում առանձնակի կարեւորում են Ֆրանսիայի նախագահի անձնական ներգրաւուածութիւնն այս հարցում:

Զրուցակիցները մանրամասնօրէն քննարկել են նաեւ Հայաստան-Եւրամիութիւն փոխգործակցութեան հեռանկարները: Նրանք համակարծիք են եղել այն հարցում, որ պէտք է առաւելագոյն ջանքեր գործադրել պահպանելու համագործակցութեան տեմպը եւ որակը, շարունակելու Հայաստանում բարեփոխումների գործընթացը, ինչի վերաբերեալ նախագահ Սերժ Սարգսեանը վերահաստատել է Հայաստանի յանձնառութիւնը: Նախագահ Օլանդը վստահեցրել է, որ Ֆրանսիան՝ որպէս Հայաստանի բարեկամ եւ ԵՄ առաջատար պետութիւններից մէկը, որպէս միջազգային խոշոր դերակատար, կը շարունակի այսուհետ եւս աջակցել Հայաստանի Եւրոպական օրակարգի առաջնորդմանը:

Հանդիպման ժամանակ ՀՀ նախագահը վերստին իր երախտագիտութիւնն է յայտնել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործում Ֆրանսիայի նշանակալի ներդրման համար:

Երկու բարեկամ երկրների միջեւ ձեւաւորուած բարձր մակարդակի երկխօսութեան շարունակականութիւնն ապահովելու նպատակով, նախագահ Սերժ Սարգսեանը վերահաստատել է Հայաստան պետական այց կատարելու նախագահ Ֆրանսուա Օլանդին ուղղուած հրաւերը:

մարտահրաւերներին ու դժուարութիւններին: Նշեալ մարտահրաւերներին ու հիմնախնդիրներին ընդառաջ, եպիսկոպոսաց դասը, ելնելով Հայ Առաքելական Եկեղեցու ծառայական ոգուց, օրհնութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսի, որոշեց հաստատել հիմնադրամ՝ Հայաստանի ու Ար-

ցախի եւ սիրիահայութեան կարիքաւոր զաւակներին աջակցութիւն ցուցաբերելու համար: Հիմնադրամի գործունէութեան մեկնարկի համար հաստատուեց երկու միլիոն ԱՄՆ դոլարի նախնական դրամագումար, իսկ հիմնադրամի ընթացիկ աշխատանքների կազմակերպման համար ստեղծուեց յատուկ յանձնախումբը»:

### ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԵԼՈՅԹԸ ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարար Ուալիտ էլ Մուալլէմ ելոյթ ունենալով ՄԱԿ-ի Ընդհանուր Նստաշրջանին, բուռն կերպով յարձակեցաւ Խորայէլի վրայ: Ան դատապարտեց դրացի երկրի քաղաքականութիւնը որ կը մերժէ տարածաշրջանը հիւլէական ուժերէն զերծ կացուցանելու առաջարկը:

Ուալիտ էլ Մուալլէմ միեւնոյն ժամանակ իր զօրակցութիւնը յայտնեց պաղեստինցի ժողովուրդին իր հայրենիք ներգաղթելու արդար պահանջին: Սուրիոյ արտաքին գործոց նախարարը դատապարտեց նաեւ երկրէն ներս անջատողականներու վայրագութիւնները, որոնք ողջ մարդիկը կ'անդամահատեն Պաշար Ասատի վարչակարգը տապալելու համար: Այնուհետեւ կոչ ուղղեց միջազգային համայնքին եւ մասնաւորաբար ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին, որպէս զի զօրավիգ կանգնին Սուրիոյ, ահաբեկիչներու դէմ մղած իր պայքարին մէջ: Ան անհրաժեշտ համարեց միջոցառումներ որդեգրել բոլոր անոնց դէմ որոնք ահաբեկչութիւնն ու տեռորը կը քաջալերեն:

### ԵԳԻՊՏՈՍ ԱՐԳԻԼԵՑ ՄԱՅՍԵՏԱԿԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Քաղաքականօրէն պառակտուած Եգիպտոս կը բոլորէ խիստ անապահով վիճակ մը: Երկրէն ներս խաղաղութիւնն ու կայունութիւնը վերահաստատելու նպատակով՝ կառավարութիւնն արգիլեց իսլամ Եղբայրներ կազմակերպութեան եւ անոր ենթակաջ բոլոր կառույցներու գործունէութիւնը, միաժամանակ հրամայեց երկրէն ներս անոնց բոլոր գրասենեակներ եւ կեդրոններու փակումը: Հակառակ առնուած այս խիստ միջոցառումներուն՝ Եգիպտոսի տարբեր շրջաններու մէջ խլրտումներն ու մահափորձերը կը շարունակուին աւելի նուազ համեմատութեամբ:

### ԽՈՌՈՎԱՅՈՅԶ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՄԵՆԻ ՄԵՁ

Անցնող ամսուան ընթացքին քաղաքական խիստ անապահով եւ խռովալուրդ վիճակ մը տիրեց Եմէնի մէջ: Երկրի յառաջդիմական կազմակերպութիւններն ու Ալ Քայտան, միասնաբար ցոյցեր կազմակերպելով, իրենց բողոքն արտայայտեցին ընկերային անարդարութիւններու եւ մարդու իրաւունքներու ոտնահարման դէմ: Եմէնի բանակը այս բոլորին դիմադրելով բիրտ ոյժի դիմեց, որու հետեւանքով տասնեակ մը քաղաքացիներ եւ 38 զինուորներ մահացան: Երկրին հարաւը գտնուող Հատրամութի շրջանին մէջ, ընդդիմադիրները զինուորական խարխիս մը գրաւելով կարեւոր թիւով բարձր պաշտօնատարներ պատանդ պահած են:

### ԼԻԲԱՆԱՆ ՎԵՐԱՊԱՅ ԼԱԲԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՆԱՅԻ ԱՄՆ-ԻՐԱՆ ՆՈՐ ՄԵՐՁԵՑՈՒՄԻՆ

Լիբանանի քաղաքական շրջանակներն ու մասնաւորաբար հանրապետութեան նախագահ Միշէլ Սուլէյման վերապահ լաւատեսութեամբ կը նայի ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ սկսուող քաղաքական մերձեցումին, որուն տուն տուող պատճառը՝ Իրանի նախագահ Հասան Ռուհանիի հեռախօսագրոցն էր նախագահ Օպամայի հետ: Շատ հաւանաբար այս քայլին պիտի յաջորդէ Հրզպալլայի ոյժերու հեռացումը Սուրիայէն: Ինչպէս նաեւ Հասան Ռուհանիի ուխտագնացութիւնը դէպի Սէուտական Արաբիա, որուն ընթացքին հանդիպում մը կը նախատեսուի սէուտցի թագաւորին հետ: Այս բոլորին իբրեւ հետեւանք միջազգային յարաբերութիւններու զծով նոր մերձեցումները կրնան ստեղծուիլ Ուաշինգթոնի եւ Մոսկուայի միջեւ:

### ՊԱՅՐԵՅՆԻ ՄԵՁ ՀԸՁՊԱԼԼԱ ՍԵՒ ՑԱՆԿԻ ՎՐԱՅ

Պահրէյնի արտաքին գործոց նախարար Խայէտ Պին Ամատ էլ Խալիֆա ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին խօսք առնելով առաջարկեց Հրզպալլայի միջազգային տեռորիստներու սեւ ցանկի վրայ դնել, որպէս ահաբեկչական կազմակերպութիւն, որ քառս եւ անապահովութիւն կը ստեղծէ: Նախարարը նմանապէս առաջարկեց արգելակել իրանեան թափանցումները տարածաշրջանին մէջ:

### 40 ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐ ԽԵՂՂՈՒԱԾ ԿԱՄ ԿՈՐՍՈՒԱԾ

Քաղաքական ապաստանեալի դիմումի համար դէպի Աւստրալիա մեկնող ճամբորդատար նաւ մը ինտոնեզիոյ Ագրապինթա շրջանին մէջ, մեքենական խանգարում մը ունենալով ցամաք վերադարձաւ: Առ այժմ 50 հոգիներ մեռած կամ կորսուած կը համարուին: 80 ուղեւոր փոխադրող նաւուն մէջէն 28 հոգի ողջ մնացած են: Աւստրալիոյ պատկան իշխանութիւնները, հակառակ իրենց խոստումին, շատ ուշ դրկած են փրկարարները: 40 կորսուած լիբանանցիները երկրի հիւսիսը բնակող միեւնոյն շրջանի քաղաքացիներն էին, որոնք փախուստ տուած էին սահմանամերձ Սուրիոյ ապաստաններու թիրախներէն: Փախտական ուղեւորներէն իւրաքանչիւրը վճարած էր քսան հազար տոլար: Աւստրալիոյ իշխանութիւնները խոստացած են վերապրողները ինտոնեզիա փոխադրել: Միւս կողմէ ինտոնեզիական իշխանութիւնները մօտէն հետաքրքրուած են այս ողբերգութեան տուն տուող պատճառին եւ անոր հետեւանքներուն մասին:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net

### ՍԻՐԻԱՅԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ Է ԲԱՅԵԼ ԵՐԵՒԱՆՈՒՄ



Սիրիահայ լուսանկարիչ Վահէ Շահինեանի անհատական ցուցահանդէսը ներկայացնում է նախապատերազմեան Սիրիան՝ որպէս ծաղկուն, բարեբեր երկիր, որտեղ ուրոյն տեղ ունէր մեծաքանակ հայ համայնքը:

Ներքաղաքական հակամարտութիւնը 57-ամեայ Շահինեանին ստիպել է ընտանիքի հետ միասին հեռանալ իր ծննդավայր Դամասկոսից:

«Նկարել սկսելեմ 8 տարեկանից: Սիրում էի նկարել: Երբ չափահաս դարձայ, ուզում էի իմ արհեստը անել, իմ գործը եւ այդպէս էլ շարունակեցի», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց Շահինեանը:

Անդրադառնալով իր աշխատանքների երեւանում ցուցադրելու նպատակին՝ լուսանկարիչն ասաց. - «Նախ, երեւի տասը հազարից աւելի սիրիահայեր կան այստեղ՝ Հայաստանում, ուզում էի իրենց լիշողութիւնները, յուշերն արթնացնել: Նոյնպէս ուզում էի, որ հայաստանցին իմանայ Սիրիան ինչ է. Սիրիան պատերազմ չէ...»: Յուզումները խանգարեց Շահինեանին շարունակել խօսքը: Այ-

դուհանդերձ քիչ անց ասաց, որ ծննդավայրում միայն համերաշխութիւն, փոխ ըմբռնում ու սէր են տեսել տարբեր ազգութիւնների ու տարբեր դաւանանքի տէր իրենց համաքաղաքացիների միջեւ, եւ իր սիրտը ցաւում է այդ ամէնը լիշելիս. - «Իսկ հիմա Սիրիան կարող եմ ասել 50 տարի հետ դնաց»:

Նա ասաց նաեւ, որ դիտարկում է ընտանիքով Հայաստանում հաստատուելու հնարաւորութիւնները, քանի որ բնաւ յոյս չունի, որ կը կարողանայ վերադառնալ Սիրիա:

Շահինեանի տուեալներով, Հայկական ղեռ 30 հազարից աւելի հայեր են մնացել: Հարցին, թէ ինչու Հայաստան չեն գալիս, նա պատասխանեց. - «Ո՞նց գան, երբ 3 տարի անգործ են, ո՛չ փող ունեն, ո՛չ բան, ինչպէ՞ս պիտի ճամբորդեն, ինչո՞վ պիտի ճամբորդեն: Ո՛չ տունը կարող են ծախել, ո՛չ խանութը...»:

Ցուցահանդէսում ներկայացուած լուսանկարները վաճառուում են, - վաճառքից ստացուած հասույթը հեղինակը ՀԲԸՄ-ի միջոցով տրամադրելու է Հայաստանում ապաստանած սիրիահայերին:

### ՈՒՐՅԿ-Ը ՔՆՆԱՐԿԵՑ ԽԱՂԱՂԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՊԱՏԿԵՐՈՒՄ



27 Սեպտեմբերի 2013թ., Երեւան: Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների Հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) եւ «Միջազգային տաղնապ» կազմակերպութիւնն այսօր համատեղ ներկայացրեցին «Խաղաղութեան հեռանկարի մերձեցում. խաղաղարարութեան 20 տարի՝ դարաբաղեան հակամարտութեան համապատկերում» ուսումնասիրութիւնը: Ռուսերէն եւ անգլերէն լեզուներով ներկայացուած սոյն հրատարակութիւնը ( www.international

alert.org/news/nagorny-karabakh) բաղկացած է երեք մասից՝ «Հայեացք Ստեփանակերտից», «Հայեացք Պաքուից» եւ «Հայեացք Երեւանից»: Ուսումնասիրութիւնը կատարել են փորձագէտներ Գեղամ Բաղդասարեանն ու Մասիս Մայիլեանն Արցախից, Միքայէլ Զոյեանը Հայաստանից եւ Աւագ Հասանովն ու Գիւլչան Փաշաեանն Ատրպէյճանից: Հրատարակութեան ներկայացումը կը տեւի 18 օր: Շաբ.ը էջ 18

### ԱՐՄԻՆ Թ. ՎԵԳՆԵՐԻ ԽՁՄԱԼԵԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ՑՆՑՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱԶՄԱԶԳ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ

#### ԶԻՆԱ ԳԻԻՐՁԵԱՆ-ՎԱՅԼԱՆՏ

Հայոց ցեղասպանության 100-ամեակին ընդառաջ եւ Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների քաղաքական արդի զարգացումների համատեքստում

Սեպտեմբերի 25-ին Գերմանիայի Բոխում քաղաքում ցուցադրուեց Սարգսյանի շարժման եւ Նախախորհրդարանի հիմնադիր անդամ, ռեժիսոր Տիգրան Խզմալեանի «Արմին Թ. Վեգներ: Ցեղասպանությունների ժամանակակից» փաստագրական ֆիլմը: Ֆիլմի ներկայացման ու Արմին Թ. Վեգները, կայսերական Գերմանիան եւ Հայոց ցեղասպանությունը թեման գերմանացի եւ այլազգի մտաւորականների հետ Բոխում համալսարանական քաղաքում քննարկելու համար անուանի ռեժիսորին Բոխում էին հրավիրել «Քվերենբուրգ գրադարանի ընկերներ» (Համալսարանական կենտրոնի գրադարան) կազմակերպությունը, «Արմին Թ. Վեգներ ընկերությունը» եւ Գերմանիայի «Հայ Ակադեմիականների Միություն-1860» գիտամշակութային միությունը: Ֆիլմի ցուցադրման համար իր դահլիճը սիրով տրամադրել էր Բոխումի պատմության կենտրոնական արխիվը: Խզմալեանի այս ֆիլմը արդէն թարգմանուել է բազում լեզուներով: Այն 2012 թ. Եւրոպայի Հայկական Համագումարի կողմից (պատասխանատու՝ Ժիրայր Քաջաբան) թարգմանուեց նաեւ գերմաներէնի եւ ցուցադրուեց Քիոլոնում եւ Մայնի Ֆրանկֆուրտում: Այնպէս որ ֆիլմն արդէն մեծ արձագանք էր գտել Գերմանիայում, որի վառ ապացույցն էր Բոխումի լեցուն դահլիճը: Բոխում կատարած հայ մտաւորականի այցին եւ քաղաքային արխիւի փաստագրական ֆիլմերի դահլիճում ֆիլմի ցուցադրմանն ու քննարկմանը լայնօրէն արձագանքեցին քաղաքային ու մարզային թերթերը (Westdeutsche Allgemeine Zeitung, WAZ 19.09.2013, 25.09.2013; Ruhr Nachrichten 24.09.2013 եւ այլն), ինչպէս նաեւ Բոխումի ռադիոն (Radio Bochum -98,5, 25.09.2013) եւ համացանցային բազմաթիւ լրատուամիջոցներ: Ցուցադրմանն ու դրան յաջորդող քննարկմանը ներկայ էին Բոխումի եւ Հիւսիս-Հռենոսեան վեստֆալիայի գանազան քաղաքներից ժամանած հայ, գերմանացի, լեհ, ռուս, պարսիկ, ասորի, պաղեստինցի արաբ, քուրդ, լազ, դերսիմցի եւ հրեայ մտաւորականներ, ինչպէս նաեւ հիւրեր Հայաստանից եւ Բելգիայից: Երեկոյի բացումը կատարեց Արմին Թ. Վեգներ ընկերության նախագահ Ուլրիխ Քլանը:

Ֆիլմն աւելին քան յուզիչ է: Այն պատմում է գերմանացի զինուորական բուժաշխատող, լիրիկ, գրող-հրապարակախօս եւ լուսանկարիչ Արմին Թ. Վեգների մասին: Հայոց ցեղասպանության ականատեսն ու հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանը չնայեա՞ծ Օսմանեան կայսրութեան արգելքներին, վտանգելով իր կեանքը, լուսանկարում է հայ ժողովրդի դաժան ոչնչացման տեսարանները եւ ինչպէս ինքն է գրում, «ուզում է իր լուսանկարներով գոնէ ինչ որ չափով օգտակար լինել հայ ազգին»:

Ֆիլմը պատմում է, թէ ինչն էր



առաջին համաշխարհային պատերազմի իրական պատճառը: 20-րդ դարի սկիզբը բնորոշում է գիտությունների թուլիքներով եւ տեխնիկական նոր նուաճումներով: Այս ամէնը պահանջում էր նոր վառելիքի աղբիւրներ: Օսմանեան նախընտրեց Գերմանիա ներմուծելու հա-

մար Գերմանիային հարկաւոր էր Բեռլին-Բաղդադ երկաթուղին, որն էլ կառուցելու համար հարկաւոր էին հարկը հազարաւոր բանուորներ, գերադասելի էին հայերը: Այն Օսմանեան կայսրութեան ամենաաշխատունակ եւ գիւղատնտեսապէս զարգացած ազգն էր: Գերման-

իան ծրագրում է ճամբարների կառուցում բանուորների եւ նրանց ընտանիքների համար: Օսմանեան կայսրութիւնն ընդունում է Գերմանիայի այս առաջարկն իհարկէ այլ նպատակներով: Մեծ Բրիտանիան մտահոգուելով գերմանա-թուրքական համատեղ գործունէութիւնից դադարեցնում է թուրքերի նկատմամբ իր ջերմ քաղաքականութիւնն ու սկսում է աջակցել Սերբիայի, Յունաստանի եւ Պուլկարիայի ազատագրմանը: Օսմանեան կայսրութիւնը իր ողջ չարութիւնը թափում է երկրի քրիստոնէական փոքրամասնութիւնների՝ առաջին հերթին հայերի վրայ: Թուրքերն օգտագործում են առաջին համաշխարհային պատերազմը, ինչպէս նաեւ Գերմանիայի կողմից մշակուած հայերի տեղահանման պլանները, բայց ոչ թէ Գերմանիայի մեծ երազանքը կատարելու, այլ հայերի զանգուածային կոտորածը կազմակերպելու հա-

Շար.ը էջ 18

**ԳԻՏԱԺՈՂՈՎ**

**Սուիրում՝  
Մերոպ Մաշտոցի Ծննդեան 1650-Ամեակին**

**Շաբաթ՝ Հոկտեմբեր 26, 2013**  
Վուտպրի համալսարան - Woodbury University  
7500 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504  
կ.ա. ժամը 9:00-էն մինչեւ կ.ե. ժամը 5:00

**ԴԱՍԱԽՕՍՆԵՐ՝**

**Հայր Լեոն Զեքիան**  
«Մերոպ Մաշտոց Անուան Խորհուրդը Տասնվեց Դարերու Հայեցակէտէն»  
**Դոկտ. Արէլ Քինյ. Մանուկեան**  
«Հոգետր Պետականութեան Կերտման եւ Ազգային Ինքնութեան Պահպանման Ծրագիրը Ե. Դարուն եւ Այսօր»  
**Դոկտ. Արախամ Տէրեան**  
«Կորինի «Վարք Մաշտոցի» Կառուցուածքն ու Նպատակը»  
**Դոկտ. Սրբոյի Հայրապետեան**  
«Ազգային Ինքնութեան Արմատատրոսը եւ Հիմնատրոսը»  
**Դոկտ. Երուանդ Զօրեան**  
«Հայկական Համացանցային Համալսարանի Առաքելութիւնը եւ Հայկական Ինքնութեան Ամրակայունը»  
**Դոկտ. Յակոբ Կիպլիւճեան**  
«Լեզուի Հեռանկարները Պատկանելիութեան եւ Ինքնութեան Յարաբերակաւնացմանն ու Համաշխարհայնացման Դիմաց՝ Ե. Դարուն եւ Այսօր»  
**Դոկտ. Ռոպրթ Հիւրն**  
«Մերոպ Մաշտոց եւ Միսիթար Սերաստացի. Հայ Ժողովուրդի Երկրորդ եւ Երրորդ Լուսատրիչները»

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Արարատ Էսփիճեան Թանգարան  
Համազգային Հայ Կրթական եւ  
Մշակութային Միութիւն  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն  
Նոր Սերունդ Մշակութային Միութիւն  
Պոլսահայ Միութիւն

**ՄՈՒՏՏԸ ԱՁԱՏ**

# ՆԱՍԱԿ՝ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻՆ

«Վասն զի ուղղափառ հաւատոյ քո լոյս, ո՛վ Եկեղեցի Հայոց, ոչ նուագեցաւ. ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմ ոչ խառնեցաւ. գաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց. ի ստուգութեան եւ ի նշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր եւ հերձուած քաղցածութեան չարութեանն ոչ գանգեցաւ. յոսկի անբիծ հաւատոյն եւ յարձաք լուսատեսիլ քանին՝ պղինձ ժանգափոտ եւ կապար սեւաթոյր ոչ գտաւ»:

«Որովհետեւ քու ուղղափառ հաւատքի լոյսը չխամբեցաւ, ո՛վ Հայոց Եկեղեցի, ցորենիդ բարի սերմերուն որոմ չխառնուեցաւ, օտարոտի ուսմանցն քու աղտաղտուկ ջուրը չպղտորեց քու աւանդութեան մաքուր աղբիւրը, քու նշմարտութեան եւ արդարութեան կենդանի հացին մէջ անկենդան խմոր եւ չարութեան ապականութեան հերձուած չաղախութեացաւ, քու անբիծ հաւատքի ոսկիին եւ լուսատեսիլ խօսքի արծաթին մէջ ժանգափոտ պղինձ եւ սեւաթոյր կապար չգտնուեցաւ»

(Յովհաննէս Վրդ. Երզնկացի Պոլուզ):

## ԴՈՒՏ. ԱՐԷԼ ՔԶՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հայաստանեայց Առաքելական մեր Մայր եւ Ս. Եկեղեցւոյ նկատմամբ այրող սիրոյ հրամայականն է որ զիս կը պարտաւորեցնէ Եպիսկոպոսական Ժողովիդ ներկայացնել առկայ նամակը: Գուցէ ինձի նման շատերու միտքն ու սիրտը, խիղճն ու հոգին կը ճենճերի այն իրավիճակով, որուն դէմ յանդիման կը գտնուի այսօր Հայ Եկեղեցին. ուստի՝ թող այս նամակի սեղմ տողերուն մէջ բարձրացած ըլլայ նաեւ այն բիւրաւոր հայորդիներուն ձայնը, որոնք նախանձախնդիր են իրենց պապերու հաւատքին, սրբութիւններուն, աւանդութիւններուն, պատմութեան եւ ինքնութեան գերագոյն արգասիքը՝ հանդիսացող Հայ Եկեղեցւոյ նկատմամբ, եւ միաժամանակ իրաւացիօրէն մտահոգուած են անոր ներկայով եւ ա՛լ աւելի՝ ապագայով:

Ով հայրեր եւ ճշմարտութեան վարդապետներ, Ձեզի վստահուած է մեր միաձնանջը եւ աստուածակառուց Հայ Եկեղեցւոյ ղեկավարութիւնը: Հոգեւոր ներշնչումով, հաւատքով եւ ճշմարտութեան տեսիլքով առած Ձեր որոշումները կրնան ոռոգել մեր Եկեղեցւոյ երբեմնի դաշար անդաստանը, արգասաւորել անոր կենսատու հողը նոր փթթումներով, երկնել դարագլուխ կազմող շրջադարձ մը ազգային-եկեղեցական զարթոնքի, հանդիսանալ հայութեան ընկերային եւ հասարակական կեանքին մէջ հոգեւոր փարոս մը կողմնորոշումի ու դառնալ սկիզբ բարոյական գիտակցութեան մը բարձր կերտումին:

Արդարեւ, մեր միասնական հայրենիքի՝ Հայաստանի անկախացումէն եւ պետականութեան վերստեղծումէն ետք, Եկեղեցւոյ եւ ընդհանրապէս կրօնական արժէք-

ներուն նկատմամբ յառաջացած ժողովրդային հետաքրքրութեան եւ դրական մօտեցումի հսկայ ալիքը, վերջին քանի մը տարիներու ընթացքին, կը թուի հետզհետէ գտնուիլ ծանծաղ տեղատուութեան մը մէջ. այս մասին կ'ապացուցանեն անցնող երկու տարիներուն իրարայաջորդ պատահարները եւ հայ մամուլին, նաեւ համացանցային տարածքի կայքէջերուն մէջ լոյս տեսած բողոքի եւ ընդվզումի բազմաթիւ յօդուածները, զորս թուարկել տեղին է այստեղ: Այնուամենայնիւ, փաստերը մատնացոյց կ'ընեն մեր հանրային եւ եկեղեցական կեանքին մէջ ստեղծուած ջղուտ իրավիճակ մը, բացասական տրամադրուածութեան եւ լարուած մթնոլորտի մը յառաջացումը, այս կացութեան մէջ վատթարագոյնը՝ Եկեղեցւոյ որոշ ղեկավարներու հանդէպ հաւատացեալներու լայն շրջանակներուն մօտ վստահութեան մը պաշարին տակաւ առ տակաւ սպառումը:

Դժբախտաբար, կարծէք թէ հայ մարդուն սրտին մէջ կոտորեցաւ բան մը. մինչեւ հիմա խնամքով պահպանուած խորհրդապաշտութիւն մը փշրուեցաւ բախելով բիրտ իրականութեան մը ժայռին: Մեր համեստ դիտարկումով, այս անբարենպաստ կացութեան ստեղծման իսկական դրդապատճառները ոչ թէ հաւատացեալ հայուն ունեցած խնդիրն է իր պաշտած կրօնքին էութեան կամ հաւատացած Մայր Եկեղեցիին հետ, այլ այն գործելանոճին, որ իր դրսեւորումներու բռնազբօսիկ երանգներով որդեգրուեցաւ մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան ղեկավարութեան կողմէ վերջին եւ նորագոյն ժամանակներուն:

Թերեւս ընդհանրապէս Հայ Եկեղեցին կազմակերպելու, գուցէ անոր մէջ նոր կարգ ու կանոն մը ամրագրելու ծրագիրն է եղած

պատճառը Եկեղեցւոյ ղեկավարութեան որդեգրած այս ընթացքին, բայց պէտք է գիտնալ որ միշտ նպատակը չէ որ կ'արդարացնէ միջոցը: Որքան ալ սուրբ ըլլայ նպատակը, միջոցն ալ պէտք է հիմնուած ըլլայ բարոյական սկզբունքներու, արդարութեան եւ առաւել եւս՝ ճշմարտութեան վրայ:

Մեր արդի հասարակութեան մէջ շատեր կը կարծեն թէ Եկեղեցին ներկայացուցածը պատրանքի եւ խաբէութեան աշխարհ մըն է: Բայց մենք զարհուրանքով տեսանք նաեւ ամբողջ համակարգերու փլուզումը աշխարհիկ միջավայրին մէջ՝ տնտեսական շուկաներու, մամուլի եւ դրամատիրական հասարակարգի: Դրամատուներու կրանիտեայ թուացող հսկայական համակարգ մը ակնթարթի մը մէջ փճացուց ժողովուրդներու ազգային հարստութիւնը, որ ամբարուած էր սերունդներու անդուլ գոհողութիւններով: Արդեօ՞ք վստահած չէ ժամանակակից մեր հասարակութիւնը իր ընկերային հասարակարգի բարոյական չափանիշները՝ ինքզինք զահավիժելով դէպի անյատակ կեանքի արժեզրկութեան: Կան նաեւ կեանքի անչափելի արագացումը, հողորդակցական միջոցներու տարատեսակ եւ նորանոր յայտնագործումները, համացանցերուն տիրեցրեքը, որոնց անհունին վրայ անգամ կարելի չէ նշմարել հորիզոնը: Ունի՞ր մարդկութիւնը պատասխաններ այս մարտահրաւէրներուն դիմաց, ո՛ւր կը գտնուինք այժմ եւ դէպի ո՛ւր կ'երթանք մենք:

Եթէ երբեք մեր Եկեղեցին կորսնցնէ հայ հասարակութիւնը բարոյապէս կերտելու իր ուժականութիւնն ու առաքելութիւնը, ո՞վ կամ ի՞նչ պիտի վերցնէ անոր տեղը. արդեօ՞ք կայ աշխարհիկ կառուց մը որ փոխարինէ զայն:

Դասախօսներ (այբբենական կարգով).-

-Դոկտ. Աբէլ Բհնյ. Մանուկեան. Հոգեւոր Պետականութեան Կերտման եւ Ազգային Ինքնութեան Պահպանման Ծրագիրը Ե. Դարուն եւ Այսօր:

-Դոկտ. Աբրահամ Տէրեան. Կորիւնի «Վարք Մաշտոցի» Կառուցուածքն ու Նպատակը:

-Դոկտ. Երուանդ Զօրեան. Հայկական Համացանցային Համալսարանի Առաքելութիւնը. կը Յաջողի՞ Կրկնել յետ-Եղեռնի Տարիներուն «Եկեղեցի-Դպրոց-Ակումբ» Երբեակի Կենսական Դերը՝ Հայկական Ինքնութեան Վերակերտման մէջ:

-Հայր Լեւոն Զէքիեան. Մեսրոպ Մաշտոց Անուան Խորհուրդը Տասնվեց Դարերու Հայեցակէտէն:



-Դոկտ. Յակոբ Կիւլլիւճեան. Լեզուի Հեռանկարները Պատկանելիութեան եւ Ինքնութեան յարաբերականացման ու Համաշխարհայնացման դիմաց՝ Ե. Դարուն եւ Այսօր:

-Դոկտ. Ռոպերդ Հիւսըն. Մեսրոպ Մաշտոց եւ Մխիթար Սեբաստացի. Հայ ժողովուրդի Երկրորդ եւ Երրորդ Լուսաւորիչները:

-Դոկտ. Սրբուհի Հայրապետեան. Ազգային Ինքնութեան Արմատաւորումը եւ Հիմնաւորումը: Կազմակերպող Միութիւններ (այբբենական կարգով).- Արարատ Էսքիճեան Թանգարան, Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն, Պոլսահայ Միութիւն:

Գիտաժողովին մուտքը ազատ է, սակայն նկատի ունենալով սրահի աթոռներուն սահմանափակ թիւը, նախընտրութիւնը պիտի տրուի նախօրօք արձանագրողներուն: Զեր տեղը կրնաք ապահովել հեռաձայնելով

818/357-1606 եւ կամ MaggieGoschin@gmail.com

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ 14-ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ ՊՍԱԿՈՒԵՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄ**

Հայ-Ամերիկեան Ընկերութեան Հայաստանի Մտղագուրկ եւ Համաձայնեցող Երեւանի Թղթութեան Ֆունտի 14րդ տարեկան թեւեթոնը կայացաւ Սեպտեմբեր 29ին, Կիրակի, կէսօրից յետոյ ժամի 2ից մինչեւ գիշերուայ ժամի 12ը, որն սիւնուց Կլենտէյլի 380, 381, 324 հեռուստակայաններէ: Ողջոյնի խօսքերով եւ քաջալերանքի կոչերով հանդէս եկան մի շարք պետական պաշտօնական անձինք, քաղաքական ղեկավար, հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչ-

ներ, մտաւորականներ, գրողներ, արուեստագէտներ եւ համայնքում ճանաչուած ղեկավարներ:

Նշելի է որ Սեպտեմբեր 29ի թեւեթոնից զուտացած գումարը ամբողջութեամբ պիտի յատկացուի Հայաստանի Արարատի շրջանի Դալար գիւղի դպրոցի եւ մանկապարտէզի հիմնական նորոգման, որի մէկ յարկի նորոգումները արդէն աւարտուած են: Հանգանակուած գումարը հասաւ 170 հազար տոլարի: Դրամահաւաքը՝ շարունակուած է:

**ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ԲՈԼՈՐԵՑ ԻՐ 28-ՐԴ ԴԱՍԱՇՐՋԱՆԸ**

Վենետիկի Կա Ֆոսկարի Պետական Համալսարանի Հայ Լեզուի եւ Մշակոյթի Ամառնային Խտացեալ Դասընթացը, բոլորեց իր 28-րդ անընդմէջ դասաշրջանը: Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան գործակցութեամբ կազմակերպուած դասընթացքին առթիւ, Հայ-Վենետիկ ինչպէս նախընթաց տարիներուն՝ այս տարի ալ հայութեամբ հարուստ ամառ մը եւս ապրեցաւ:

Վենետիկ, համաշխարհային արուեստի եւ մշակոյթի պատմական քաղաքամայրերէն մին՝ սերտ կապեր ունեցած է Հայերու հետ, Կիլիկեան թագաւորութեան օրերէն սկսեալ, մինչեւ այսօր գլխաւոր կեդրոններէն մէկն է Հայ մշակոյթին:

2013 դասաշրջանի 23 օրերու ընթացքին հաւաքուած էին 46 ընթացողներ 13 տարեբեր երկիրներէ եւտարբեր տարիքներէ զարգացնելու համար իրենց հայերէնի մակարդակը կամ նոր ծանօթանալու իրենց նախնիներու եւկամ իրենց հետագոտութեան, գիտական հետաքրքրութեան լեզուին՝ Հայերէնի:

Այս ընթացողներէն 15-ը հայ չէին, պատկանելով տարբեր ազգութիւններու՝ թուրք, իտալացի, լեհացի, շուեթացի, ռուս, վրացի եւ ֆրանսացի:

Այս 46 հոգիներուն կը միանային դասընթացքին առաջին երկու շաբթուան ընթացքին, Թորոնթոյի Գօլօլեան Ազգային Վարժարանին այս տարուան շրջանաւարտները, 11 աշակերտ, առաջնորդութեամբ իրենց ժրաջան տնօրէն Տիար Արմէն Մարտիրոսեանի եւ ուսուցչուհի Սուզան Միլտունեանի: Այս չորրորդ տարին է արդէն որ Գօլօլեան Վարժարանը կը բերէ իր շրջանաւարտ աշակերտութիւնը Վենետիկի դասընթացքին, քաղելով մեծ օգուտներ եւ փոխադարձաբար ճոխացնելով դասընթացքը՝ անոնց երիտասարդական աւիւնով:

Ուշագրաւ երեւոյթ էր հայ մշակոյթի երբեմնի մեծ ուսանէն՝ Պոլիսէն 7 երիտասարդ ուսուցչուհիներու, ինչպէս նաեւ մայր Հայկերէն չորս ընթացողներու ներկայութիւնը:

Դասաւանդութիւնները տեղի ունեցան Վենետիկի Համալսարանին Հայ Լեզուի եւ Գրականութեան ամբիոնը ընկալող շէնքին կառուցաներուն մէջ: Ընթացողներու բնակութիւնը ապահովուած էր՝ նոյնպէս Վենետիկի Համալսարանի կառույցներէն Աբբաջիա եւ Եւրոպեան

ուսանողատուններուն մէջ Վենետիկի պատմական Կանարեշոյ եւ Զուսեկկա թաղերը:

Դասընթացքը ունեցաւ չորս մակարդակ: Առաւօտեան 8.45էն մինչեւ 13.15 տեւող դասապահերուն, դասաւանդութեան ծրագիրը կ'ընդգրկէր՝ առաջին երեք մակարդակներուն վրայ՝ բացի հայերէն լեզուի շաբաթական քսան պահ ուսուցումէն, որ առաջին իսկ մակարդակէն կը կատարուի հայերէն, ընդհանուր ներածութիւն մը Հայ պատմութեան եւ մշակոյթին, այս վերջինս անգլերէն լեզուով՝ շաբաթական հինգ պահ: Չորրորդ մակարդակին վրայ, աշխարհաբարի բարձրագոյն ընթացքին կ'աւելնային՝ գրաբար, ժամանակակից եւ յատկապէս սիւնուքեան գրականութիւն, լեզուի պատմութիւն, հայ արուեստ՝ մանաւանդ պատմական ճարտարապետութիւն, եւ հայ երաշտութեան ներածութիւն: Ասոնց կողքին, բոլորին համար ազատ հրամցուեցան՝ դուրուկի եւ հայկական պարերու դասեր յետ միջօրէններուն:

Ուսուցչական կազմը հետեւեալն էր՝ Րոզիկ Թաշճեան (Փարիզ, լեզու), Արամ Իփէքճեան (Պատովա, երաժշտութիւն, դուրուկ), Կորիւն Խաչատուրեան (Փարիզ, լեզու: Պարէտ Մանօք) Փարիզ, լեզու: Բաֆֆի Սէթեան (Փաստինա, լեզու, գրականութիւն: Սօսի Սուսանեան (Բուդապէշտ, լեզու:

Բենեդեկտա Քոնթին (Պադովա, գրաբար), Հ. Լեւոն Զէքիեան (Վենետիկ, լեզուի պատմութիւն, արուեստ), որ եւ Դասընթացքի վարիչն է:

6 Օգոստոսին խումբը այցելեց Ս. Ղազարու Մխիթարեան Մայրավանքը, մանրամասն պատմական բացատրութիւններով Հ. Լեւոն Զէքիեանի: 4 եւ 11 Օգոստոսին Հ. Լեւոն Վրդ. պատարագեց Վենետիկի Հայոց պատմական Ս. Խաչ Եկեղեցին, որ նաեւ հայ Սիւնուքի ամենահին եկեղեցիներէն է: 2, 7, 12, 13, 16 Օգոստոսին, երեկոները, Ուսանողատան պարտէզին մէջ, դասախօսութիւններ կատարուեցան Դասընթացքին մասնակցող Պրոֆ.ներ Ռոնալդ Սիւնիի եւ Սարա Լափորթի, ուսուցիչ Պարէտ Մանօքի եւ Հ. Լեւոն Զէքիեանի կողմէ ընթացողներու հոծ մասնակցութեամբ: 9 Օգոստոսին ուսուցիչ Արծուի Բախչինեան ցուցադրեց երկու փաստագրական նոր ֆիլմեր, մէկը

**ANNUAL CAMPING AT CAMP YERAZ**  
**THREE DAYS OF FUN**  
**Organized by**  
**GAIDZ YOUTH ORGANIZATION & HOMENMEN LADIES AUXILIARY**  
**MARK YOUR CALENDARS FOR**  
**OCTOBER 11,12,13 FRIDAY,SATURDAY, SUNDAY**  
**Swimming - Basketball -Volleyball - Skeet Shooting - Off-Roading - Horseback Riding - and many more...**  
**\$100 per person (3 days) includes all meals,water, soda**  
**For more info. You may contact Lena at : 626-485-6434 or Aline: 626-864-5575**  
**Please bring your own Tents & flash lights.**

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ Ս. ՎԱՐՂԱՆ ԶՕՐԱՎԱՐԻ ՄԱՍՈՒՆՔԸ ՇՆՈՐՀԵՑ Ս. ՎԱՐՂԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ

Կիրակի, Սեպտեմբեր 15, 2013, Հայաստանեայց Եկեղեցուց տաղաւար տօներէն Ս. Խաչի վերացման տօնին առիթով՝ Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ: Նոյն ատեն նշուեցաւ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարուած Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 45-ամեակը:

Պատարագիչն ու քարոզիչ էր Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեան: Ս. Խորանին կը սպասարկէին Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Հոգւ. Տ. Մամիկոն Վրդ. Քիլէճեան, ինչպէս նաեւ Մայր Տաճարի սարկաւակներն ու Ս. Ներսէս Ընծայարանի սաները:

Այս հանդիսաւոր օրուան առիթով ներկայ էին Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Տիար Կարէն Նազարեան եւ իր ազնիւ Տիկինը, Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի անդամներ, ազգային եւ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ յօգնատուներ հաւատացեալներ: Երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի դպրաց դասը ղեկավարութեամբ՝ Խմբավար Խորէն Մէլիքեանի:

Նորին Սրբազնութիւնը իր քարոզին մէջ նախ անդրադարձաւ օրուան տօնին եւ ապա արտայայտուեցաւ Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ կառուցուած գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարի մասին, որ եղած էր սերունդներու երազը եւ իրականացած կարգ մը ազգայիններու վճռակամութեան, տեսիլքին եւ յանձն առած մեծ գոհողութեանց շնորհիւ: Ս. Վարդան Մայր Տաճարը, 45 տարի ետք, ահա դարձած է հայ հաւատացեալին «ազգային տունը», եւ որ կը հոգատարէ մեր հոգեւոր կեանքն ու կը պահպանէ կրօնական ու ազգային ավանդութիւնները: Սրբազան Հայրը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ.ի, որ այս առիթով Ս. Վարդան Ջօրավարի մասունքը շնորհած է Ս. Վարդան Մայր Տաճարին: Աւելի քան 1500 տարուան մասունքը, քարի մասնիկի մը վրայ դրոշմուած Ս. Վարդանի արիւնը, գետեղուած է արծաթեայ ձեռակերտ ու խիստ ճաշակաւոր մեծ խաչի մը կեղերնի «աչքին» մէջ: Այս մասունքը, անցեալ Օգոստոսին, Ս. էջմիածնի Մայր Տաճարին մէջ մասնաւոր արարողութեամբ մը Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ սրբազործուած է:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ որ Ս. Պատարագի ընթացքին աղօթքով եւ երախտագիտութեամբ պիտի յիշուին անունները Մայր Տաճարի մահացած կնքահայրերուն եւ այն բոլոր ազգայիններուն՝ որոնք նիւթական կամ բարոյական օժանդակութեամբ



Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեան՝ Ս. Վարդան Ջօրավարի մասունքը կրող խաչը կը ներկայացնէ հաւատացեալներուն

իրականութեան վերածեցին երկար տարիներու այս երազը:

Յաւարտ Ս. Պատարագի, առաջնորդութեամբ Ս. Ներսէս Ընծայարանի տեսուչ Արժշ. Տ. Մարտիրոս Ա. Քհնյ. Չեւեանի եւ մասնակցութեամբ Վարդանանց Ասպետներու Կազմակերպութեան չորս անդամներուն՝ Ս. Վարդան Ջօրավարի մասունքը բերուեցաւ Եկեղեցու կեղերն՝ ուր տեղի ունեցաւ անդամտանի արարողութիւնը, որ մէ ետք խաչը գետեղուեցաւ եկեղեցու դասին մէջ եւ հաւատացեալները հերթով եկան ու երկիւղածութեամբ համբուրեցին Հայ ժողովուրդի մեծագոյն հերոս Ս. Վարդանի մասունքակիր խաչը:

Տարեդարձի ճաշկերոյթ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գառութեան շքեղ հանդիսասրահին մէջ, աւելի քան 200 անձերու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ տարեդարձի ճաշկերոյթը: Պատուոյ սեղանի վրայ տեղ գրաւած էին Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեան, Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան, Հոգւ. Տ. Մամիկոն Վրդ. Քիլէճեան, Արժշ. Տ. Մարտիրոս Ա. Քհնյ. Չեւեան, դեսպան Տիար Կարէն Նազարեան եւ իր ազնիւ Տիկինը, Փրոֆ. Մարք Մովսէսեան, կազմակերպիչ յանձնախումբի համաստեանայեանք՝ Փօլ եւ Պըրթա Ջաքեան եւ օրուան հանդիսավար Արփիինէ Բարսեղեան:

Բացման աղօթքը արտասանեց Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան: Կազմակերպիչ Յանձնախումբի համաստեանայեանք Փօլ Ջաքեան կենաց առաջարկեց բոլոր անոնց համար՝ որոնք իրենց մասնակցութիւնը բերած են Ս. Վարդան Մայր Տաճարի երազի իրականացման: Հանդիսավար Արփիինէ Բարսեղեան հրաւիրեց օրուան գլխաւոր խօսողը՝ Փրոֆ. Մարք Մովսէսեան, որ պատմականը ըրաւ 45-ամեայ Ս. Վարդան Մայր Տաճարին, որ իր ոսկեայ գմբէթով եւ բոլորին կողմէ

### ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԴԱՍԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐԱՆՈՑԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ ՍԱՐԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



#### ՄԱՅՏԱ Մ. ԲԱՐՈՒՄԵԱՆ

Տարբեր էր այս տարի վերածուեց ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ վարժարանէն ներս: Արտակարգ գոհունակութիւն եւ ուրախութիւն մը կար բոլորին դէմքին, ի տես աշակերտներու թիւի կրած աճին, բարեզարդուած շէնքին: Դրական ու ներդաշնակ նոթով մը սկսած վերամուտէն շաբաթ մը անց Սահակ-Մեսրոպ վարժարանը Հինգշաբթի Սեպտեմբեր 6ին, անգամ մը եւս իր դռները բացաւ, այս անգամ յատուկ ծնողներու ընդառաջ, անոնց ներկայացնելու 2013-2014 տարեշրջանի ուսուցչական կազմը, կրթական ծրագիրն ու վարժարանի մէջ կայացած հոգեթովիչ նորութիւնները:

Հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Կէրի Ճըրճըրեան բարի գալուստ մաղթեց բոլորին ու բարեկամ տարուան մը երաշխիքով ոգեւորուած կատարեց կարգ մը յայտարարութիւններ ու բեմ հրաւիրեց Պրն. Ասպետ Պետիկեանի, որ իր աղօթքով պաշտօնապէս բանայ երեկոն:

Վարժարանիս Տնօրէն Պրն. Յովսէփ Ինճէճիքեան կարեւորեց հայկական կրթօճախներու դերը սի իւրի մէջ հասակ առած մանուկի ինքնութեան ճանաչման ու ամրապնդման հոլովոյթին մէջ: Դրուատեց ծնողները, որոնք զիտակից հայ վարժարանի, այս դերին ի դին ամէն գոհողութեանց յանձն կ'առնեն իրենց մանուկը առաջնորդել դէպի հայկական վարժարան: Ան երաշխաւորեց, որ մեր կրթօճախն ալ իր առաւելագոյնը պիտի մատուցէ բարձրորակ ուսում ու դաստիարակութիւն ջամբելով անոնց: Տնօրէնը նշեց նաեւ, թէ վարժարանիս մանկամտերի բաժնի աշակերտութեան թիւը զգալի աճ արձանագրած է:

Անդրադառնալով նախորդ տարուան, Պրն. Ինճէճիքեան նշեց վարժարանիս կարգ մը նուաճումները՝

«Սբէլլինկ Պէյ» եւ «Սբէէգ Մէէգ» ճառտասանական մրցոյթներուն մեծաթիւ մրցանակակիրներ

(Ը) կարգի աշակերտները ձԲԸ ճի հովանաւորած «Ռոպոթիք» ծրագրին մասնակից Հայերէնի Բաժանմունքը պար-

գեւակիր «Երուանդ Պապայեան» մրցանակին

. Լիոնս Բոար պարբերաթերթը Մարգական գնահատելի թիւով մրցանակներ

Ապա ներկայացուց երեկոյի նպատակը՝ ծնողներուն ընծայել առիթը մօտէն ծանօթանալու իրենց գաւակներուն ուսուցիչներուն, դասածրագրին, կարգապահական օրէնքներուն, դասարանի պայմաններուն ու շրջապատին: Այնուհետեւ խօսք առաւ Մնողաուսուցչական մարմնի ատենադպրոսին՝ Տիկ. Աննա Պապայեանը, որ շնորհակալութիւն յայտնեց նուիրատուներուն ու իր կողքին կանգնող ծնողներուն:

Տնօրէնը ապա յայտարարեց վարժարանիս մէջ կատարուած հիմնական նորոգութեանց մասին՝ Տէր Եւ Տիկ. Կէրի եւ Մարիա Ճըրճըրեաններ հովանաւորած են խոհանոցի նորոգութեան լրիւ ծախսերը: Խոհանոցի կից գտնուող Կրպակի ծախսերը հոգացած են՝ Ռիչըրտ Եւ Ռոպին Էլմասեաններ, իսկ ամբողջովին բարեփոխուած Համակարգիչներու ու սենեակի բարեփոխման ծախսերը՝ Տէր եւ Տիկ. Էտոուարտ եւ Գարինա Բէլլեկեան ընտանիք, Պետրոս եւ Էմի Ազար, Նիքոլաս եւ Ռիթա Լամպաճեան, նաեւ Մնողաուսուցչական մարմին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հանդիսաւոր բացում: Վեր. Վաչէ էքմէքեանի աղօթքէն ետք, բարերար գոյգերը, շէնքի մուտքին ժապաւէնը կտրեցին: Բացման արարողութեանէն ետք ծնողները գնահատանքով, գոհունակ ու լայն ժպիտներով մտան իրենց գաւակներուն առօրեայ դրութեան մէջ: Դասարաններու այցելութեանէն ետք ծնողները ընկերային պահ մը ունեցան վարժարանիս շրջաբակին մէջ, ուր եղաւ նաեւ հիւրասիրութիւն մը:

Վարժարանիս իսկապէս ժրջան, կայտառ ու նուիրեալ ծնողներու յանձնախումբին տեսլականին ու յանձնառութեան երախտիքն է, որ պիտի վայելէ Սահակ-Մեսրոպի ընտանիքը: Այդ խումբ մը մայրերու անսակարկ նուիրումն ու սէրը այսօր նիւթականացած կը հմայէ ու անպայման կը մղէ մեզ դէպի շարունակական վերելք, յանուն ապագայ հայ - քրիստոնեայ անհատի կերտման:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain www.syrianarmenianreliefund.org

ԷԿՈՒՄԵՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ ՍԵՄԻՆԱՐ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ



Սեպտեմբերի 28-30-ը Ծաղկաձորում, նախաձեռնութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջկեղեցական յարաբերութիւնների բաժնի եւ աշակցութեամբ Հայաստանեան Կլոր Սեղան միջկեղեցական բարեգործական հիմնադրամի, Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցած էկոմենիկ-մին նուիրուած սեմինար, որին մասնակցում էին ներկայացուցիչներ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմերից, Հայ Կաթողիկէ Եկեղեցուց, հասարակական զանազան կազմակերպութիւններից եւ քրիստոնէական երիտասարդական միութիւններից:

Սեմինարը սկսուեց միասնական Տէրունական աղօթքով, որից յետոյ սեմինարի կազմակերպիչ Գոհար Ղալաչեանն ամփոփ ներկայացրեց ծրագրի նպատակը, սկզբունքները եւ օրակարգը: Եռօրեայ դասընթացին զեկուցումներով հանդէս եկան Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգի գրասենեակի տնօրէն Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանը, Միջկեղեցական յարաբերութիւնների բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ.

Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանը, Հոգեշնորհ Տ. Զաքարիա վարդապետ Բաղումեանը եւ Կլոր Սեղանի հիմնադրամի ծրագրերի պատասխանատու Ղարիբ Յարութիւնեանը: Զեկուցողներն անդրադարձան էկոմենիկ շարժման ստեղծման պատմութեանը, նպատակին, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կառուցուածքին, Հայ Եկեղեցու մասնակցութեանը էկոմենիկ շարժմանը, միջկեղեցական աստուածաբանական երկխօսութիւններին եւ արդի մարտահրաշքներին, որոնք ծառայած են Քրիստոնէական Եկեղեցիների առաջ: Բանախօսները, ներկայացնելով ԵՂԽ-ի երիտասարդական ծրագրերը, ընդգծեցին նաեւ էկոմենիկ շարժման մէջ երիտասարդութեան ներգրաւուածութեան կարեւորութիւնը: Անդրադարձ կատարուեց նաեւ Հայաստանեան Կլոր Սեղանի հիմնադրամի գործունէութեանը կրթական, սոցիալական եւ համայնքային զարգացման ոլորտներում:

Սեպտեմբերի 29-ին սեմինարի մասնակիցները Կեչառիսի վանական համալիրում մասնակցեցին նաեւ Ս. Պատարագին:

ԱՐՄԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՒ ՍՕՆԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ ՄԻԱԶԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Վերջերս Լեհաստանի Մշակութի նախարարը յատուկ շքանշանով պարգևատրած է Արամ Խաչատուրեան Տուն-Թանգարանի տնօրէնուհի, Արամ Խաչատուրեան Եռեակի անդամ, անուանի դաշնակահարուհի Արմինէ Գրիգորեանը, հայ արուեստագիտուհիին լեհական երաժշտութեան զարգացման ու տարածման բերած կարեւոր նպաստին համար:

Սօնա Բարսեղեան, Արմինէ Գրիգորեանի դուստրը, անցեալ շաբաթ Գերմանիոյ Aachen քաղաքին մէջ տեղի ունեցած դաշնամուրի Միջազգային Amadeo Մրցոյթին շահած է Առաջին Մրցանակը: Մրցոյթին մասնակցած են 33 դաշնակահարներ, 15 երկիրներէ: Այս առիթով կը շնորհակարենք մեծատաղանդ դաշնակահարուհի Արմինէ Գրիգորեանն ու նոյնքան տաղանդաւոր իր երիտասարդ դուստրը, մաղթելով իրենց նորանոր յաջողութիւններ:

Ստորեւ կու տանք երկու արուեստագիտուհիներու հակիրճ կենսագրութիւնը:

Կատարած՝ Պեթհովենի sonata-ները: Ան մենահամերգներ տուած է Ռուսաստանի, Իտալիոյ, Միացեալ Էմիրեթներու, Գերմանիոյ, Լիթուանիոյ, Լիբանանի, Կիպրոսի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Արմինէ Գրիգորեան "Roma 2003" Դաշնամուրի Մրցոյթին շահած է Առաջին Մրցանակը: Այդ առթիւ Հռոմի Խորհրդարանականներու Գրասենեակը զինք պարգևատրած է նաեւ յատուկ մրցանակով եւ շքանշանով: Արմինէի կատարումները հրապարակուած են ձայնասկանաւորով (CD) : Հայաստանի մէջ առաջին անգամ ըլլալով՝ 2005-ին, Արմինէն կազմակերպած է "ART OF ACCOMPANIMENT" Ֆեսթիվալը: Որպէս դատական կազմի անդամ՝ ան մասնակցած է բազմաթիւ ազգային եւ միջազգային երաժշտական մրցոյթներու: Ան Երեւանի Պետական Երաժշտանոցի դասարիսու է, եւ 2004 թուականէն կը վարէ Արամ Խաչատուրեանի անուան Տուն-Թանգարանին տնօրէնի պաշտօնը:

Արմինէ Գրիգորեանը Արամ



Արմինէ Գրիգորեան Աւարտելով Երեւանի Չայքովսքիի եւ Կոմիտասի անուան երաժշտանոցները՝ Արմինէն իր յետաւարտական մասնագիտական ուսումը կատարելագործած է Գ. եւ Ս. Սարաջեաններու հսկողութեան

Խաչատուրեան հռչակաւոր Եռեակի դաշնակահարուհին է: Եռեակը նուագահանդէսներ տուած բացի Հայաստանէն եւ Ռուսիայէն՝ բազմաթիւ այլ երկիրներու մէջ, ներառեալ Անգլիա, Գերմանիա, Աւստրիա, Աւստրալիա, Զինաս-



ներքոյ: Ան ելոյթներ ունեցած է Հայաստանի Ֆիլհարմոնիկ Նուագախումբին հետ, կատարելով Մոցարթի, Պրամսի եւ Պեթհովենի դաշնամուրի concerto-ները: Որպէս նուագակցող (accompanist) ան մրցանակներ շահած է Արամ Խաչատուրեանի (1997) եւ Լեւոն Զիլինկիրեանի (2002) մրցոյթներուն մէջ: Արմինէն մասնակցած է նաեւ անուանի ջութակահար Նիկոլա Մատոյեանի նուագահանդէսներուն եւ

տան եւայլն: Արամ Խաչատուրեան Եռեակի անդամներուն նախաձեռնութեան, 2010 թուականին Երեւանի մէջ հիմնուեցաւ Դասական Երաժշտութեան Զարգացման Հիմնադրամը, որուն նպատակն է Հայաստանի եւ Արցախի տաղանդաւոր աղքատ երեխաներու երաժշտական ունակութիւնը զարգացնել: Հիմնադրամի

Շաք-ը էջ 19

ՄԱՍԻՍ ՀԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:----- Fax: -----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

### ՄԵԾ ՄԱՅՐՍ

**ՌԻՏԱ ՄԱՆՌԻԿԵԱՆ**

Ծննդավայրիս մասին իմ յուզերը, միշտ ներկայ, ուղեկցում են ինձ միանուակ, հոգեթով երջանկություններ եւ ինձ հպարտութեան հով ու սուն են տալիս նորոգ:

Ծննդավայրիս սուրը մեր անրջային էր... Մոտաքը բացուած էր երկաթեայ ժանեակահիւս ծանր դարպասի դռներով, որտեղից դրսի կողմից երեւում էր ներսի վարդենիներն ճշտադարձ պարտէզը, մէկ կողմի վրայ, ուր մագլցող թեւերով իրար միակցուած որթատունկի թափառող ճիւղերը ձգուած էին ոգեզմայլ թարմութեամբ եւ հանդարտութիւն ներշնչում փողոցից ներս դիտողին կամ ներս մտնողին: Ծան լայնածաւալ աստիճանների մօտ, բարձր ամրակուռ սիւնաշարերը, հակող պահակի տպաւորութեամբ էին դիտուում: Իմ յիշողութեան մէջ է միշտ տունն այդ շքեղ, ուր ես ծնուել ու սկսել եմ ճանաչել շրջապատի աշխարհը՝ տան սահմաններում, որ էր գեղեցիկ, հանգստաւէտ, դրախտային տեղ: Հրաւէր քնքերի նախապատրաստութիւններ էին միշտ աչքերիս առջեւ ու ես աստիճաններով վեր մագլցողը, որ տեսնէի խրախճանքը՝ ինձ ետ էին ուղարկում քնելու: Իմ մանկական մտածողութեան մէջ տպաւորուած յիշարժան իրադարձութիւններն իմ մէջ մեծ սէր ու յարգանք էին ծնել իմ ծնողների ու մեծերի հանդէպ:

Նրանք անցել էին դժուարին ճանապարհներ՝ գաղթել են փրկուելու թուրքի սպանդից, բանտաքսորից, մղձաւանջային պայմաններից ու հասել մի այլ երկիր եւ սկսել են իրենց կեանքը նոր սկզբից: Նրանք կառուցել են իրենց տունը, յարմարուել են տեղին, հաւատով եւ յոյսով աշխատել են, չեն թերացել, յաղթահարել են ակնկալիքները, ոտքի են կանգնել, գբաղումներով մոռացութեան են տուել անցածի անհաճոց յիշողութիւններն ու շարունակել են արդար ու երջանիկ սիրով նուիրուել նոր գործերի ընթացքին եւ հասել են յաջողութեան: Բայց... դեռ նոր խաղաղուած, տուն-տեղ հիմնած, իրենց վաստակով իրենց կեանքը ապաւինելու միջոցին՝ նրանք կրկին որոշում են թողնել ամէն ինչ օտարի հողում եւ մեկնել հայրենիք, այսինքն՝ մեր հայերի երկիրը՝ տարուելով հայրենիքից եկած զգայացուց զովեստներին, փոթորկոտ կանչերին:

Մեր մեծերը ակնկալել են հայրենիքը որպէս երազային իրականութիւն, ուր հայերը վերջապէս հաստատուելու էին ազատ կեանքով ապրելու համար: Նրանք իմացել են, բայց չեն պատկերացրել կեանքի տարբեր՝ ընկերվարական (սոցիալիստական) պայմանները: Հայրենիքը դիւթել է նրանց եւ գաղթել են: Կռիւներից տուժուած երկիրն, արդէն ծայր թշուառութեան մէջ, ընդունում է հայերին լաւագոյն հեռանկարներով: Աշխարհի բոլոր կողմերից գալիս են հայերն հայրենակարօտ: Նրանց գալով փրկուել է երկիրը մեծ ազգին ձուլուելու վտանգից: Գաղթականները վերակառուցում են խաթարուած կեանքը հայրենիքում՝ բերելով իրենց գիտութիւնը, արհեստը, արուեստ - շնորհները: Շատերի նման մեր ընտանիքն էլ անցնում է տուն կառուցելու անհրաժեշտ գործին՝ նախ քաղաքի ամենահեռուստ-

ծայրամասում (գաղթականներին տրուած իրաւունքով ու միջոցներով) եւ յետոյ քաղաքի նորածաղկ կենտրոնում՝ պատահական բախտաւորութեամբ:

Մինչ այդ խաբուած եւ թակարդի մէջ ընկածի տրտմութեամբ, երկրից դուրս ելնելու, ետդարձի իրաւունք չունենալու անյոյս իրավիճակում, մեր մեծերը այլեւս չեն երազել նոր տուն կառուցելու մասին: Նրանք ստիպուած են եղել շուտափոյթ մի տուն գնել եւ տեղաւորուել, ազատուել վարձով բնակուելու նեղ ու սահմանափակ վիճակից: Ծապալուած հոգեվիճակով, տուն գնելն էլ շատ հեշտ չի եղել: Կոմունիստական երկրում ամէն ինչն էլ փոքր էր միայն թղթագրամ՝ ուսուցանող միջոցով: Եւ միջոցաւ էլ գտնել մէկին եւ, երբ փողը պատրաստ է եղել տունը գնելու համար, պետութիւնը կատարել է դրամի արժեգրում եւ շրջանառութեան մէջ է դրել նորերը՝ հարուած հասցնելով յատկապէս երկիր նոր մուտք գործած գաղթականներին: Կատարուածի համար տրտնջւելը, շաթահարուելը անիմաստ եւ անօգուտ նկատուելով, ազնուակիրթ հայրսանձուունջ տարել եւ այլեւս արժէք չունեցող թղթագրամների կապոցները: Դրանք, որոնք մէկ օր առաջ միայն շողշողուն, գրնգուն ոսկի, մեծարժէք մետաղներ որպէս իրենց յոյսն են եղել անձանթ երկրում նոր կեանքի սկիզբը ապահովելու համար, այրուել ու ոչնչացուել են, փոշի դարձել: Դրանք, նրանք բերել են հեռուից՝ պահպանելով, գուրգուրելով, հսկելով: Դրանք, նրանք կուտակել են տարիների անվերջ աշխատանքի ջանքերով...

Հայրս ծանր հիւանդացել էր: Նա գառնացում էր բարձր ջերմութեան մէջ: Նրա մարմինը, ծածկուել էր խոշոր, կարմիր ուռած շրջանակաձեւ թմբիկներով: Մենք բարձրաձայն լաց էինք լինում մեր հօր համար: Մեր ձայնը երկիրն էր հասնում, կարծում էինք նա մահանում է: Մեծ մայրս անհանգիստ շրջում էր անգործ մտահոգութեամբ, մայրս սակաւախօս էր դարձել եւ ոչինչ չէր ասում մեզ, հօրեղբայրս բժիշկ էր փնտրում: Մայրս մեզ դուրս էր ուղարկում՝ խաղալու: (Մեզ համար գաղթելը

նոյնն էր ինչ՝ մէկ փողոցից միւսը տեղափոխուելը: Մեր մեծերն էին, որ եփուած էին հայրենիքի օրէնքներին յարմարուելու մղձաւանջներով): Մեծ հայրս, սակայն միշտ հանդարտ դատող թագաւորը մեր տան, չէր հեռանում իր որդու կողքից: «Կ'անցնի օդում, կ'անցնի», յուսադրում էր նա անընդհատ: «Ամէն ինչին դիմացանք, ասոր ալ կը դիմանանք», վստահեցնում էր նա: Նրա վարդազոյն այտերը գսպուած յուզմունքն էին վկայում: Սպանդից եւ ինչ-ինչ դժուարութիւններից ազատուած եւ ընտանիքին հասած մեծ հայրս ժամանակին իր ջանքերով փրկել է հօրս, երբ արդէն կորցրած է եղել իր երկու որդիներին սովամահութիւնից: «Աս ալ թող իմ ձեռքով երթայ», ասել է նա եւ հօրս օրերով տարել է հոսող գետակի սառցաջրի մէջ լողացրել ու մաքրել նրա մարմնի շատ ցաւոտ վէրքերը՝ տարածուած քոսը:

Այս անգամ էլ մեծ հայրս էր, որ փրկելու էր իր մերազատ որդուն այդ վիճակից: Հօրս կողքին նստած, նա գուսպ էր իր տապանայների մէջ եւ չէր աղօթում, նա հանդարտ ձայնով հայրական գօրեղ օրհնանքն էր հաղորդում, յուսադրում նրան միայն. «Հանգիստ եղիր, տղաս, քեզ պահպանէ, կ'անցնի: Աս ալ ուրիշ դաժան փորձութիւն էր մեզի հասած... վնաս չունի, կ'անցնի...» կրկնում էր նա: «Կարեւորը՝ անձի կորուստ չէր, մենք այդ ցաւերին ալ դիմացանք... Եղածը՝ մեծ վնաս էր, աղէտ կարծես յանկարծահա՛ եկաւ ու անցաւ... լաւ եւ տխուր օրեր կը պատահին կեանքին ընթացքին... մենք պէտք է դիմանանք եւ սովանք... եւ ապրենք... մտածէ՛, շուտ առողջացիր, որ մենք ալ լծուինք մեր տունը կառուցելու գործին, ուրիշների պէտք է կեանքը տղաս... եկանք, պիտի մնանք, ետդարձ չկայ, պիտի ապրինք...»

Իմ նոր ընկերների հետ, երբ ես ծանօթանում էի հայրենիքում, նրանք ինձ ներկայանում էին սկսելով ասել իրենց մասին կարճ, առանց ճոխացնելու կամ առանց թաքցնելու ճշմարտութիւնը, առանց քաշուելու, նոյնիսկ արտասանելու նման, պարթոսով: Նրանք ասում էին, «Հայր չեմ ունեցել, կուտում է մահացել», «Մայրս լուսացք անելով է մեզ մեծացրել», «Ես շատ աղքատ հողագործի ընտանիքում եմ ծնուել» կամ «Մենք ուտելու հաց չենք ունեցել», '«Հայրս անգործ, ունեւորութիւնից գրկուած արհեստա-

ւոր է եղել, շուտ մահացել է» եւ այս տեսակ նախաբաններով էին սկսում: Ես տխրում էի, բայց իսկապէս չէի ըմբռնում աղքատ լինելու իրավիճակը: Ես այդ չէի տեսել ու զգացել: Փոխարէնը՝ իմ աչքերի առջեւ էին գալիս իմ մանկութեան յաւերժահարսի ճերմակ տուն պատկերներն ինձ ծանօթ, հրճուած էի հոգեպէս: Այդ տանն էր ձեւաւորուել իմ բնաւորութեան նախնական շերտերը՝ անվրդով, ոչ մի բանի պակասը չզգացողի մեղքով, մեծահասակների՝ մեծ հօր, մեծ մօր ամէնօրեայ փաղաքշանքներով ու ծնողներիս հոգացող վերաբերմունքներով, անմոռաց ամառային գով գիւղերում մեր անցկացրած ամենաերջանիկ հանգստեան օրերով, երբ մի օր խաղողի այգում էինք հասուն խաղողի որդկոյնները մեր ձեռքերով քաղելու եւ համտեսելու համար կամ հնամեայ եկեղեցու բակում դիտելու գիւղի բնիկների կիրակնօրեայ հաճոյազբաղմունքը՝ ծանրաքաջ գանգերը հնչեցնելու համար հաստ պարանից կախուած վեր-վար անող ուժեղ տղամարդկանց տանջալից, բայց իրենց երջանկացնող ուժի ցուցադրումը կամ ամառուայ շոգ օրերին լեռնային գով գիւղական բարձունքներում, ուր նոր կթած կաթն ունէր մէկ թիզ սերուցք եւ հակայ մէկ խնձոր ամէն օր ծառից պոկուում էր ինքնուրոյն եւ սպասում մեզ՝ կանաչ խոտին հանգչած: Ես՝ տանը, ծովափնեայ գուարձութիւնները անպակաս էին, երբ հայրս աշխատանքից վերադառնում էր մեզ այնտեղ հանդիպելու նախապէս մօրս հետ պայմանաւորուած ծրագրով՝ բարձր ժայռի գագաթից պարանով ծովի աւազոտ խոնաւ գետնին էր սահեցնում մեր ամենասիրած նրբանուշ մանանայի տուփը: Մենք վազում էինք բռնելու պարանը, իսկ Բինգոն՝ մեր աշխոյժ շնիկը, վազում էր ուրախ հաչոցներով՝ ողջունելու սիրելի տիրոջը՝ հոգատար հօրս, բարձր ժայռի վերեւում կանգնած:

Մեր հայ ազգի հետ կատարուածի մասին կցկտուր լսել էի մեր ընտանիքում, երբ մեր մեծ ընտանիքը հայրենիքում ամէն երեկոյ հաւաքում էր խօսելու նաւթի լայմի լոյսով լուսաւորուած մեծ մօրս սենեակում, երբ ստիպում էինք մեծ հայրիկիս պատմել իր կեանքից: Ղպրոցում այդ մասին չէին խօսում: Մենք ապրում էինք կոմիւնիստական երկրում՝ իխտ, դաժան, անարդար, անգութ, սահ-

Մար.բ էջ 19

<p><b>ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ</b></p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH  <b>Geragos</b> BANQUET HALL OF PASADENA</p>	<p><b>NEWLY REMODELED</b></p>
		<p><b>Now ready to host your</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Wedding</li> <li>• Baptism</li> <li>• Anniversaries</li> <li>• All other happy &amp; sad events.</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>• Բարսանիք</li> <li>• Մկրտութիւն</li> <li>• Տարեդարձ</li> <li>• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:</li> </ul>
<p><b>ՎԱՔԷ 562-715-8730 ՎԱՔԷ</b></p>		
<p><b>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք</b></p>		







### ԱՐՄԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՒ ՍՕՆԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Շարունակում էք 15-էն

Հիմնադիրները, յանձնա Ա. Գրիգորեանի, Կարէն Շաղալեանի եւ Կարէն Քոչարեանի, վերջին երեք տարիներուն մեծ աշխատանք կատարած են Հայաստանի տարբեր մարզերէն տաղանդաւոր երեխաներ եւ պատանիներ գտնելու եւ անոնց երաժշտական տաղանդը մշակելու ուղղութեամբ: Աւելի լաւ պատկերացում ունենալու համար Դասական Երաժշտութեան Զարգացման Հիմնադրամի աշխատանքներուն, ստորեւ կու տանք Հիմնադրամի կայքէջը:

<http://www.cmdfarmeria.com/default.html>

#### Սօնա Բարսեղեան

Տաղանդաւոր դաշնակահարուհի Սօնա Բարսեղեան աւարտած է Երեւանի Չայքովսքիի անուան երաժշտական դպրոցը: Երիտասարդ դաշնակահարուհին նուագասանէն՝ արտասահմանեան կարգ մը երկիրներու մէջ, ինչպէս Ռուսիա, Լիթվանիա, Արաբական էմիրեթ, Մ. Նահանգներ, Լեհաստան, Իտալիա, Պելճիքա, Լուքսեմպուրկ եւ այլն: Հակառակ երիտասարդ տարիքին, Սօնան շահած է բազմաթիւ մրցանակներ, ինչպէս՝

Բ. մրցանակ՝ Արամ Խաչատուրեան Միջազգային Մրցոյթ (2007).

Ա. մրցանակ՝ Հանրապետական Սենեկային Անսամպլի մրցոյթ (2008).

Նախագահական Մրցանակ՝ որ կը տրուի լաւագոյն դասական երաժշտութիւն կատարող երիտասարդ արուեստագէտին (2009).

Ա. Մրցանակ՝ Հանրապետական Մրցոյթ Դաշնամուրի Ընկերակցութեան Արուեստին նուիրուած (2010).

Ա. մրցանակ՝ Շոփէնի Անուան Հանրապետական Մրցոյթ (2010).

Ա. մրցանակ՝ Amadeo Մրցոյթ (2013):

Սօնան ելոյթներ ունեցած է Հայաստանի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբի եւ Պետական Երիտասարդական Նուագախումբի հետ, կատարելով՝ Շոսթաքովիչ, Ռախմանինով, Խաչատուրեան եւ Բաբաջանեան:

2000-2007-ին, ան եղած է Սպիվաքով Հիմնադրամի թոշակաւոր: Սօնան վարպետութեան դասեր առած Nora Fisher-էն, Vladimir Krainev-էն եւ Ph. Kassard-էն:

Ի դէպ է նշել, որ Սօնան մասնակցած է նաեւ Ա. Խաչատուրեան Երեւանի նուագահանդէսներուն, մօրը՝ Արմինէ Գրիգորեանի հետ կատարելով երկու դաշնամուրի համար գրուած ստեղծագործութիւններ, արժանանալով ունկնդիրներու եւ քննադատներու բարձր գնահատանքին:

Վ. Կ.

### ՄԵԾ ՄԱՅՐՍ

Շարունակում էք 16-էն

մանափակ: Մենք դարձել էինք, կամ աւելի ճիշտ՝ յարմարուելով փոխուել էինք նոր մարդատեսակի, համրի պէս լուակեաց ու ամփոփ: Մեծ մայրս չէր կրում իր նշանաւոր ոսկէ շրջանակով ակնոցը: Մեծ հօրս ձեռնափայտը գողացել էին փողոցում՝ նրա մէջ ոսկի յայտնաբերելու յոյսով: Գիշերները ես քուն էի մտնում աքսոր տանող սեւ, փակ աւտոմեքենաների հահաբեկող ձայները չլսելու համար՝ գլուխս խորը վերմակի տակ, շնչահեղձ: Յիշում էի եւ մտածում, որ մեծ հայրս տեսնես իրենց երկրում միշտ պաշտօնավարել է ամերիկեան ընկերութեան մէջ, մենք աղքատ չէինք նաեւ հայրենիքում, որովհետեւ մենք տարել էինք նոր երկիր տարիներ չհամար ուտեստեղէն եւ հազնեղիք, ունէինք տուն, այս բոլորի մասին ես մտածում էի մեծ սարսափով եւ սպասում էի, որ մեզ էլ կ'աքսորեն: Վախենում էի գիշերային ձայներից, տեղի մարդկանցից: Իմ ծննդավայրի յուշերը երանելի, սակայն, ինձ հետ էին միշտ ու փոփոխիչ:

Մեր մեծ ընտանիքը՝ առաքինի մեծ մայրս, մեծ հայրս, հօրեղբայրս եւ մենք՝ հայրս, մայրս, քոյրս, եղբայրս բնակւում էինք արդէն վերը չիշատակածս հոյակապ տան մէջ, մինչեւ հայրենիք գաղթելը: Մեր տան առջեւի սիւնների վերեւում թռչունները մշտական ապահով իրենց բոցն էին հիմնել գագաթին եւ կռուարար աղաղակում էին ամբողջ տարին: Մեր ականջներին արդէն վարժուել էին նրանց ձայներին ու արձագանգներին եւ ուրախ էինք նրանց ներկայութեան համար: Նրանք տաք երկրի թռչուններ էին եւ ոչ մի տեղ չէին գնում: Մեծանալով այդ տան մէջ, ես գեղեցկութիւն էի տեսել, յարմարութիւն, անդորր: Ես կարծում էի, թէ այդպէս է նաեւ ամէնուր: Տան ներքին նիստուկացը, նոյնպէս արժանի չիշատակութեան, մեծ մայրիկիս գործունեայ մասնակցութիւնն էր: Նա էր տիրուհին եւ եռանդուն աշխատողը՝ եփել թափելով, ձեռագործի զբաղումներով, իրենց երկրից՝ Թուրքիայից բերած, սովորութիւն դարձրած ձմռան համար պահեստաւոր ապուխտ-երշիկի (բաստուրմայի) հմուտ պատրաստումով, յատուկ հիւրերի ընդունելութիւններ կազմակերպելով, տօնական օրերի բժախնդիր նախապատրաստումներով, անուշեղէնների եւ յատկապէս նրբաճաշակ թխուածքների տեսակների խոհարարական վարպետութեամբ պատրաստման, հսկայ թաղարների մէջ ձգուող ծաղկատեսակների աճեցման, ինամքի, տան մեծամասշտաբ մաքրութեան եւ զանազան այլ գործեր կատարելու աշխատասիրութեամբ, որպէս ամէն օրուայ պահանջմունք եւ կանոն, դեկավարուում էր մեծ մայրիկիս կողմից համբերատարութեամբ: Ես տեսել եմ օրուայ այդ աշխուժութիւնները: Մեծ մայրս չէր վստահում ոչ մէկին եւ ինքն էր փայլեցնում դրսի աստիճանների վրայ երկարող փայտեայ ջնարակուած բազրիքը լաթի կտորով, որ խզուածք չառաջացնէր կոպիտ

որեւէ մաքրումով: Ամէն առաւօտ կանուխ, նա ոգեւորութեամբ սկսում էր իր նախատեսած գործերը եւ անպայման աւարտում: Նա սիրում էր նոր թարմութիւն տալ արդէն իսկ մաքուր, արեւի գոյներով պայծառացած սենեակներին, ընդարձակ սրահի ճեղմակ մարմարածածկ փայլուն մակերեսին, որի վրայ միշտ սահելու անկաշկանդ ցանկութիւն էր առաջացնում: Ես, երբեմն յաջող առիթով, փախչում ու բարձրանում էի տան դրսի աստիճաններով՝ տեսնելու մեծ մայրիկիս: «Ինչպէ՞ս բարձրացայ», ասում էր նա ինձ թրքերէն ու մայրիկիս կանչում:

Չգիտեմ ինչպէս, ես մանկուց զգացել էի իմ մեծ մայրիկի առաւելութիւնները: Նա հրապուրիչ էր, տօնական, ոգեւորուած, արթուն: Տիկին Լուսինան մեզ հեքիաթասողը, տատիկիս հրաւէրով ժամանակ առ ժամանակ գալիս էր մէկ շաբաթով, որ մեզ նոր հեքիաթներ պատմէր ամէն իրիկուն, քնելուց առաջ: Դա ամենաուրախացնող լուրն էր լինում մեզ համար: Մենք շատ էինք սիրում Լուսինա մայրիկին: Նրա սեւ արտագետն ու դէմքի չամիչի պէս կնճռոտուած մաշկը փոքրիկ աչքերի շողերով մեզ տանում եւ դարձնում էր հեքիաթների դիւական աշխարհին դիւրաթափանց: Լաւ է, որ վերջում չար կործանուում էր, եւ մենք գերզգայնացում, հոգ դատողութեամբ հանգիստ քուն էինք առնում այդտեղ, պատմողի ծնկներին: Տօնը դա էր մեզ համար, երբ մեր առջեւ դրուած էր նաեւ տանը պատրաստուած ուտելու համեղ բաները՝ ընկոյզ-նուշերով կարկանդակները, կաղինի, դժմակորիզի մաքրուած միջուկները, չամիչը, չիրեղէնը, փխրուն սիսեռը՝ լաբլաբուն եւ մենք խրուած-նստած բազմոցի վրայ, փափուկ ներքնակի տակ, լսում էինք հաւատացած: Հեքիաթների թագուհին ես միշտ պատկերացնում էի իմ տատիկի կերպարանքով, քանի որ նա ունէր մէջքից ներքեւ իջնող երկար ծամեր, որը նա միշտ կոկիկ հաւաքում էր գլխի ետեւի մասում, որորուած պարանի շրջանակի նման, եւ շատ տարբեր էր ուրիշներից: Ես կարծում էի նա շիկահեր է: Մայրս ասում էր, որ ճերմակել են նրա մազերը, ճակատի մասում դեղնաւուն էին, սահուն մետաքսի պէս եւ ճերմակ լինելը չէր զգացւում: Վատն այն էր միայն, որ նա նաւթով էր մարսում իր գլուխը այն օրերից սկսած, երբ իրենց երկրում տնից տարել են ամուսնուն սպանդի, ընտանիքը սովի է մատնուել: Տան մէջ տարածուել է քոսը, վտանգաւոր տենդը, մահացել են երկու որդիները, մնացածները՝ եօթը հոգի, անուժ գետնին անթի պառկած, փրկուել են դրացի մեծահասակ հայերի գաղտնի օգնութեամբ: Մեծ մօրս ասելով՝ սովի տարիներին տարածուած ոջիւնները նաւթի հոտից չեն մօտեցել իրեն: Այսպէս էլ սովորութիւն է դարձրել եւ շարունակում էր նաւթով մարսել իր երկար ծամերի արմատները՝ չխուսափելով անզամ նաւթի անընդունելի, անթաքոյց հոտից:

(Շարունակելի)

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնէ՛ք ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
 626-354-5924 • [vamedia@yahoo.com](mailto:vamedia@yahoo.com)

**DOWNLOAD NOW**



Available on the **App Store**

Available on **Android Market**

